# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

43ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 49 (2059) ՇԱԲԱԹ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 30, 2023
VOLUME 43, NO. 49 (2059) SATURDAY DECEMBER 30, 2023

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## Հայաստանի Տակաւ Աճող Տնտեսութիւնը

Տարեվերջի այս օրերուն՝ պահ մը հեռանալով քաղաքականութենէն կ'արժէ հպանցիկ ակնարկ մը նետել Հայաստանի մէջ արձանագրուող տնտեսական զարգացումներուն վրայ, որոնք նոյն թափով շարունակուելու պարագային բաւական յոյս կը ներշնչեն երկրի ապագայ զարգացման ուղղութեամբ:

Անցեալ շաբաթ Արժոյթի Միջազգային Հիմնադրամը հրապարակեց աշխարհի տարբեր երկիրներու Համախառն Ներքին Արտադրութեան (ՀՆԱ) տուեալները, որոնք հիմնուած են մէկ տարուայ ընթացքին երկրի մը արտադրած ապրանքատեսակներու եւ ծառայութիւններու ընդհանուր գումարին վրայ:

Այս տարի Հայաստանի ՀՆԱ-ն առաջ անցած է տարածաշրջանի միւս երկու երկիրներէն՝ Վրաստանէն եւ Ատրպէյճանէն: 2023ևի տուեալներուն համաձայն, Հայաստանի մէջ ՀՆԱ-ն մէկ շունչի համար ցուցանիշը դարձած է առաջատարը Հարաւային Կովկասին մէջ՝ կազմելով 8.280 տոլար: Ատրպէյճանի մէջ, համաձայն նոյն հաշուարկին, մէկ շունչի համար ՀՆԱ-ն կը կազմէ 7.530 տոլար, իսկ Վրաստանի մէջ՝ 8.160 տոլար:

Հայաստանի պարագային այս ցուցանիշը կրկնապատկուած է վերջին հինգ տարիներուն՝ 2018-ի թաւշեայ յեղափոխութենէն ետք, երբ վերջ գտան տնտեսական մենաշնորհները ու փտածութիւնը (Կոռուպցիան) դադրեցաւ համակարգային բնոյթ կրելէ: Այս չի նշանակեր որ, կաշառակերութիւնը վերացած է, սակայն յստակ է որ այն ներկայիս չի վայելեր պետական հովանաւորչութիւն:

Հակառակ որ, 2022 թուականին Հայաստան տակաւին կը գտնուէր պատերազմի եւ համաճարակի ազդեցութեան տակ, տնտեսութիւնը աճեցաւ 12.6 տոկոսով, որ բացառիկ երեւոյթ էր համաշխարհային չափանիշով: Այդ նոյն ցուցանիշը պահելը շատ դժուար իրագործելի պիտի ըլլար յաջորդական տարիներու եւս ու այդ պատճառաւ Համաշխարային Դրամատունը այս տարուայ համար կ'ակնկալէր 5 տոկոս տնտեսական աճ, որ հետագային վերատեսութեան ենթարկուելով այժմ կը նախատեսուի 7 տոկոս: Համեմատութեան համար պէտք է նկատի առնել որ, աշխարհի ամենէն աւելի զարգացած երկիրներուն՝ Միացեալ Նահանգներու եւ Եւրոպայի մէջ այդ ցուցանիշերը կը տա-

Շար.ը էջ 6

## Փաշինեան Սան Փեթերպուրկի մէջ Մասնակցեցաւ ԵԱՏՄ եւ ԱՊՀ Հանդիպումներուն

*ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան երկօրեայ աշխատանքային այցով մեկնեցաւ Ռուսաստանի Դաշնութիւն՝ Սան Փեթերպուրկի մէջ մասնակցելու Եւրասիական Տնտեսական Բարձրագոյն Խորհուրդի նիստին, իսկ Դեկտեմբեր 26-ին՝ ԱՊՀ ոչ-պաշտօնական գագաթաժողովին:*

*Եւրասիական Բարձրագոյն Տնտեսական Խորհուրդը ԵԱՏՄ բարձրագոյն մարմինն է, որուն մէջ ընդգրկուած են Միութեան անդամ երկիրներու ղեկավարները: ԵԱՏՄ անդամներն են Հայաստանը, Պելառուսիան, Ղազախստանը, Ղրղզստանը եւ Ռուսաստանը:*

*Յունուար 1-էն սկսեալ Հայաստանը Ռուսաստանէն կը ստանձնէ Եւրասիական Տնտեսական Միութեան (ԵԱՏՄ) մարմիններուն նախագահութիւնը, «ինչին առնչութեամբ մենք անդամ երկիրներու աջակցութեան եւ արդիւնաւէտ համագործակցութեան յոյս ունինք՝ մեր առջեւ դրուած խնդիրներու իրականացման նպատակով», յայտնած է վարչապետ Նիկոլ Փաշինեան՝ ելոյթ ունենալով Սան Փեթերպուրկի մէջ տեղի ունեցող Եւրասիական Տնտեսական Խորհուրդի նիստին:*

*Ան խորհրդանշական համարած է, որ Հայաստանի նախագահութիւնը կը համընկնի ԵԱՏՄ պայմանագրի ստորագրման տասնամեակին, «որու հիմքին այն հիմնադրոյթն է, որ ԵԱՏՄ-ն տնտեսական միաւորում է, որ պէտք չէ ունենայ քաղաքական եւ, առաւել եւս՝ աշխարհաքաղաքական օրակարգ»: «Մենք շարունակում ենք այն այդպէս ընկալել եւ հէնց այս ծիրին մէջ զարգացնել փոխգործակցութիւնը մեր տնտեսական համագործակցութեան շրջանակներում՝ ձգտելով կանխել եւրասիական համարկումը քաղաքականացնելու բոլոր փորձերը», ընդգծած է Փաշինեան:*



Սան Փեթերպուրկի մէջ կայացած Եւրասիական Բարձրագոյն Խորհուրդի նիստը

*«ԵԱՏՄ-ն եւ նրա տնտեսական սկզբունքները չպէտք է փոխկապակցուեն քաղաքական յաւակնութիւնների հետ: Առեւտրի եւ համարկման հիմնարար ազատութիւնները չեն կարող եւ չպէտք է սահմանափակուեն քաղաքական նկատառումներից ելնելով, դա միանշանակ կը յանգեցնի միաւորման հիմնարար սկզբունքների քայքայումի», ըսած է վարչապետը՝ շարունակելով. «Այս ծիրին մէջ, հայկական կողմը կարեւորում է մինչեւ 2030 թուականը եւ մինչեւ 2045 թուականը տնտեսական գործընթացների հետագայ զարգացման մասին հռչակագրի ստորագրումը, որը հիմնուած է ԵԱՏՄ միջնաժամկէտ եւ երկարաժամկէտ զարգացման հայեցակարգային եւ առաջնահերթ ուղղութիւնների վրայ»:*

*Հայկական կողմը կ'ողջունէ Իրանի հետ ազատ առեւտուրի համաձայնագրի ստորագրումը, ըսած է Փաշինեան եւ յաւելած. «Լիաձեւաչափ համաձայնագրի ստորագրումը կը նպաստի Իրանի հետ առեւտրատնտեսական, լոկիսթիք եւ փոխադրութեան կապերի ամրապնդմանը եւ հնարաւորութիւն կու տայ ամուր պայմանագրային հիմք ստեղծել համատեղ ծրագրերի համար»:*

*Միեւնոյն ժամանակ, ընդգծած է Հայաստանի վարչապետը, ԵԱՏՄ-ի ներսը կուտակուած են սկզբունքային բնոյթ կրող շարք մը չլուծուած խնդիրներ: Ան նշած է անդամ պետութիւններու կողմէ ընդհանուր ուժանիւթային շուկաներու գործունէութեան մօտեցումները, սկզբունքները եւ մեխանիզմները համաձայնեցնելու վերաբերեալ հիմնարար լուծումնե-*

Շար.ը էջ 5

## Պաքուն Ֆրանսացի Երկու Դիւանագէտ «Անցանկալի Անձ» Հռչակած Է

*Պաքուն Ատրպէյճանի մէջ Ֆրանսայի դեսպանատան երկու աշխատակից «անցանկալի անձ» հռչակած է:*

*Ատրպէյճանական լրատուամիջոցներու փոխանցմամբ, Ատրպէյճանի Արտաքին գործերու նախարարութիւն կանչուած է Ֆրանսայի դեսպան Աննն Պուայօն, որուն յանձնուած է Պաքուի բողոքագիրը:*

*Դիւանագէտներուն անունները, ինչպէս նաեւ որոշման պատճառներուն մասին չէ հաղորդուած:*

*«ԱՊԱ» գործակալութեան համաձայն, Պաքուն 48 ժամ տուած է այդ դիւանագէտներուն՝ երկիրը լքելու համար:*

*Ատրպէյճանի իշխանութիւնները տեւական ժամանակէ կոշտ մեղադրանքներ կը հնչեցնեն Ֆրանսայի իշխանութիւններու հասցէին, այդ շարքին՝ Հայաստանի հետ ունեցած սերտ յարաբերութիւններուն պատճառով:*

*Անցած օրերուն Ատրպէյճանի նախագահը, հերթական անգամ քննադատելով Ֆրանսան, պնդած էր, թէ կը փորձէ «հայերէն աւելի հայ ըլլալ»:*

*Պաքուն Եւրոմիութեան ազդեցիկ երկրի իշխանութիւնները կը մեղադրէ նաեւ «գաղութատիրական քաղաքականութեան» մէջ:*

*Փարիզը աւանդաբար չ'արձագանգեր Ալիեւի վարչակազմի յայտարարութիւններուն:*

## Հայաստանը Մէկ Շունչին Համար ՀՆԱ-ի Ցուցանիշով Յառաջ Անցած Է Վրաստանէն Եւ Ատրպէյճանէն

*Հայաստանը 2023-ին մէկ շունչին համար ՀՆԱ-ի ցուցանիշով դարձած է առաջատարը Հարաւային Կովկասին մէջ: Այդ մասին յայտնած է Արժոյթի Միջազգային Հիմնադրամը (ԱՄՀ):*

*Հիմնադրամին հաշուարկով՝ 2023-ին Հայաստանի մէջ մէկ շունչին համար ՀՆԱ-ն կը կազմէ 8.280 տոլար:*

*Ատրպէյճանի մէջ, համաձայն նոյն հաշուարկին, մէկ շունչին համար ՀՆԱ-ն կը կազմէ 7.530 տոլար, իսկ Վրաստանի մէջ՝ 8.160 տոլար:*

*Մէկ շունչին համար ՀՆԱ-ն Թուրքիոյ մէջ կը կազմէ 13.380 տոլար, Իրանի մէջ՝ 4.230 տոլար, Ռուսաստանի մէջ՝ 13.010 տոլար:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Փաշինեանի Հարցազրոյցը Եւ Ալիեւի Կողմից Ակնկալուող Երաշխիքները «Հայկական Ռեւանշիզմի» Դէմ

ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

*Դեկտեմբերի 19-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը հարցազրոյց տուեց Հայաստանի Հանրային հեռուստատեսութեանը: Այդ հարցազրոյցին նախորդել էին Փաշինեանի մի շարք մարզային այցեր, որոնց ընթացքում նա հերթական անգամ աղմկահարոյց յայտարարութիւններ էր արել Ատրպէյճանի հետ բանակցային գործընթացի պատմութեան վերաբերեալ:*

*Պետրոս Ղազարեանի հետ հարցազրոյցի համար Փաշինեանը յստակ ուղերձներ էր պատրաստել, որոնք անմիջական կապ ունեն խաղաղութեան պայմանագրի ստորագրման գործընթացի եւ այդ գործընթացում ատրպէյճանական պահանջների հետ:*

*Խօսքը, մասնաւորապէս, Պաքուի կողմից ակնկալուող երաշխիքների մասին է, որոնց մասին նշել էր Ատրպէյճանի Նախագահ Իլհամ Ալիեւը Դեկտեմբերի 6-ին Պաքուում «Ղարաբաղ. վերադարձ տուն 30 տարի անց. ձեռքբերումներ եւ դժուարութիւններ» համաժողովի ընթացքում: Խօսելով տարածաշրջանում խաղաղութեան հաստատման հեռանկարների մասին՝ նա յայտարարել էր, որ Ատրպէյճանը ցանկանում է յստակ երաշխիքներ տեսնել, որ Հայաստանի կողմից ռեւանշիզմ չի լինելու, եւ որ Հայաստանը ամբողջովին ընդունում է ստեղծուած իրավիճակը:*

*Թէ ինչ երաշխիքների մասին է խօսում Ալիեւը, կարելի է կռահել, օրինակ, ատրպէյճանցի իշխանամէտ յայտնի փորձագէտ, «Թոփչուբաշով կեդրոնի» ղեկավար Ռուսիֆ Հուսեյնովի վերջին յօդուածից: Հուսեյնովը (նա ատրպէյճանական այն փորձագէտներից է, որոնց գործառոյթների մէջ է մտնում ընկալելի լեզուով արտաքին լսարանին ներկայացնել Պաքուի մօտեցումներն ու դիրքորոշումները) IPG Journal գերմանական ամսագրում լոյս տեսած իր յօդուածում նշում է. «Իրավիճակը նաեւ բարդանում է նրանով, որ Հայաստանի օրէնսդրութիւնը դեռեւս ներառում է տարածքային պահանջներ Ատրպէյճանի նկատմամբ, իսկ նորմատիւ իրաւական փաստաթղթերը, ինչպիսին է 1990 թուականի Սեպտեմբերի 21-ին ընդունուած Հայաստանի անկախութեան հռչակագիրը, յղում են անում Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի կէտման մասին 1989 թուականի համատեղ որոշմանը: Այս իրաւական ֆոնը անհանգստութիւն է առաջացնում Ատրպէյճանում, որտեղ կանխատեսւում են այնպիսի սցենարներ, որոնց դէպքում Հայաստանի սահմանադրական դատարանը կարող է մերժել խաղաղութեան պայմանագիրը կամ յետագայում իշխանափոխութիւնը կարող է վերհանել տարածքային պահանջները»:*

*Նմանատիպ մտահոգութիւններ արտայայտում են նաեւ Ատրպէյճանի փորձագիտական ու քաղաքական դաշտերի այլ ներկայացուցիչներ: Կայ մեծ հաւանականութիւն, որ Ալիեւի նշած երաշխիքներից մէկը Երեւանի կողմից հենց այդ նորմատիւ իրաւական ֆոնից ձերբազատուելն է:*

*Այդ առումով Փաշինեանի հարցազրոյցի հիմնական նպատակը հենց հանրութեանը այդ հնարաւոր փոփոխութիւններին նախապատրաստելը ու այդ փոփոխութիւնները քարոզչական մակարդակում արդարացնելն էր:*

*Փաշինեանի հնչեցրած ամենակարեւոր միտքն այն էր, որ Հայաստանի անկախացման ակունքներում կանգնած գործիչները սխալ սկզբունքներով էին առաջնորդւում այդ գործընթացում: Անդրադարձ կատարելով այդ թեմային՝ նա մասնաւորապէս նշել է. «Մենք ընդհանրապէս բառերին, հայեցակարգերին պէտք է մեծ ուշադրութիւն դարձնենք... Երբ որ վերադառնում ենք 1990-91 թուականներ եւ հետեւում ենք այն մարդկանց խօսոյթին, որոնք, ի վերջոյ, հեղինակել են ՀՀ անկախութիւնը, մի շարք զարմանալի եւ տարօրինակ փաստերի ենք ականատես լինում, եւ ինչ այժմ կ'ասեմ, կապ ունի քիչ առաջ ասուածի հետ: Նկատի ունեմ՝ 1990-91 թուականների խօսոյթով մենք պարզում ենք, որ առաջնորդները կամ առնուազն նրանց մի մասը ոչ թէ ասում են՝ մեզ անկախութիւն է պէտք, որովհետեւ մենք ուզում ենք պետութիւն ունենալ, պետական ազգ լինել, այլ ասում են՝ մեզ անկախութիւն է պէտք՝ ԼՂ հարցը լուծելու համար: Էստեղ է ամենակարեւոր խնդիրը»:*

*Այս յայտարարութիւնը համադրելով Ատրպէյճանից հնչող յայտարարութիւնների, ինչպէս նաեւ Փաշինեանի ակտիւացած մարզային հանդիպումների հետ, որոնք քարոզարշաւ են յիշեցնում, կարելի է ենթադրել, որ Հայաստանի իշխանութիւնները պատրաստւում են Ատրպէյճանին տալ Ալիեւի կողմից պահանջուող երաշխիքներից մէկը՝ նորմատիւ իրաւական բազայի վերացումը՝ ՀՀ սահմանադրութեան նախաբանի փոփոխութեան միջոցով, որում կայ յղում Անկախութեան հռչակագրին: Այդ առումով յատկանշական է, որ սահմանադրական բարեփոխումների յանձնաժողովը վերջերս սահմանադրական բարեփոխումների առաջարկների նոր փաթեթ է մշակել եւ*

Շար.ը էջ 6

# Պետութեան Մէջ Պետութիւն Չի Կարող Լինել

ՀԵՂԻՆԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ

*Զարմանալի զուգադիպութեամբ այն օրը, երբ ՀՀ ԱԺ-ում քննարկւում էր հարցը, ըստ որի՝ Հայաստանի կառավարութիւնը իր վրայ է վերցնում Արցախի կառավարութեան եւ քաղաքացիների՝ ՀՀ պանքերի նկատմամբ (շուրջ 315 մլրդ. դրամ) պարտաւորութիւնների ահռելի բաժինը, ԼՂ նախագահի պաշտօնը զբաղեցնող Սամուէլ Շահրամանեանը որոշեց յիշեցնել իր մասին եւ «նիստանման» մի հաւաք կազմակերպել, որին, դատելով հրապարակուած լուսանկարներից, ներկայ է եղել նաեւ Արցախի պետական նախարար, նախկին նախագահ Արայիկ Յարութիւնեանի եղբօրորդի Արթուր Յարութիւնեանը: Այս «խորհրդաւոր ընթրիքի» մասին հանրութեանն իրազեկեց Արցախի տեղեկատուական շտաբը: Ըստ այդմ. «Սամուէլ Շահրամանեանը Դեկտեմբերի 22-ին հանդիպել է այն պետական մարմինների ղեկավարների հետ, ովքեր շարունակում են պաշտօնավարել հասարակական հիմունքներով: Քննարկուել են բռնի տեղահանումից յետոյ արցախցիների հիմնախնդիրները, դրանց լուծման ուղղութեամբ առանձնացուել առաջարկութիւններ: Ներկայացնելով կատարուած ու կատարուող աշխատանքները՝ Նախագահ Շահրամանեանն ընդգծել է 2024 թուականին դրանք շարունակելու անհրաժեշտութիւնը, Ստեփանակերտի քաղաքապետին եւ շրջվարչակազմերի ղեկավարներին յանձնարարել շարունակել գոյքագրել բռնի տեղահանուած քաղաքացիների խնդիրներն ու պարբերաբար ներկայացնել կառավարութեանը: Անդրադառնալով վերջին շրջանում լայն քննարկում ստացած նախագահի՝ Սեպտեմբերի 26-ի հրամանագրին՝ Շահրամանեանն ընդգծել է, որ «Արցախի Հանրապետութեան իրաւական դաշտում գոյութիւն չունի փաստաթուղթ, որով նախատեսւում է լուծարել պետական ինստիտուտները»: Ցնցողն այն է, որ յիշեալ հրամանագրի մասին, որը, պարզւում է, գոյութիւն չունի, յայտարարութիւն էր տարածել նոյն այս՝ Արցախի տեղեկատուական շտաբը՝ Սեպտեմբերի 28-ին, որում մասնաւորապէս նշուած էր՝ «մինչեւ 2024 թ. Յունուարի 1-ը լուծարել պետական բոլոր հիմնարկները եւ դրանց ենթակայ կազմակերպութիւնները, եւ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետութիւնը դադարում է իր գոյութիւնը»: Նշենք, որ յիշեալ խորհրդաւոր հրամանագրի՝ գոյութիւն չունենալու մասին (այն այդպէս էլ չի հրապարակուել) Շահրամանեանը յայտարարել է Հայաստան վերադառնալուց յետոյ՝ հարցազրոյց անելով՝ «որեւէ մէկը տեսե՞լ է նման փաստաթուղթ»:*

*Ուշագրաւ է, որ նախօրէին Արցախի ՄԻՊ Գեղամ Ստեփանեանն «Ազատութեան» հետ զրոյցում նշել էր, թէ այդ, փաստօրէն, «գոյութիւն չունեցող» հրամանագիրը հակասահմանադրական ճանաչելու եւ չեղարկելու շուրջ «այս պահին քննարկումներ են ընթանում»: Արցախի օմբուդսմէնը միաժամանակ տրամաբանական էր համարել, որ Սամուէլ Շահրամանեանը հենց ինքն էլ չեղարկի Արցախը լուծարելու մասին իր իսկ հրամանագիրը: Այսօր, փաստօրէն, Արցախը լուծարած Սամուէլ Շահրամանեանը կրկին պնդել է, որ նման հրամանագիր Արցախի իրաւական դաշտում գոյութիւն չունի: Այդ դէպքում՝ այդ ինչ քննարկումների մասին էր խօսում Արցախի ՄԻՊ-ը: Գուցէ վերջինիս նշած չեղարկման պրոցեսն արդէն տեղի է ունեցել՝ Շահրամանեանը մէկ այլ հրամանագիր է ստորագրել իր՝ խնդրոյ առարկայ հրամանագիրը չեղարկելու մասին:*

*Ի դէպ, Շահրամանեանի այսօրուայ հաւաքին ու դրա վերաբերեալ հաղորդագրութեանն արձագանքել է արցախցիներից մէկը՝ Լուսինէ Պօղոսեանը: «Պրն. «յարգարժան» ու հասարակական հիմունքներով «Նախագահ» 3 ամիսա չտեսանք ժողովրդի հարցերով զբաղուող, գոյքագրող, խնդիրները պարբերաբար ներկայացնող ու էտ «կառավարութեանը» ներկայացնողներին, մի հատ էլ հրամանայ «շարունակել վերը թուարկածները: Էտ ում հարցերով է՞ք զբաղուել, որ 3 ամիսա էս ժողովուրդը անտերութեան մատնուածա, նոյնիսկ զոհուածների ծնողներին չէք ցաւակցել»,- ֆէյսպուքեան իր էջում գրել է Պօղոսեանը:*

*Շահրամանեանի կազմակերպած հաւաքին արձագանքել է նաեւ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Տարոն Չախոյեանն ու ֆէյսպուքում մասնաւորապէս գրել. «Լեռնային Ղարաբաղը լուծարեցին, զէնքերը յանձնեցին, ժողովրդին տեղահանեցին, հիմա Երեւանում «փրկիչ» են խաղում:*

Շար.ը էջ 11

**Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր տեսակէտները**

Մասիս
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of **the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
*http://www.massisweekly.com*

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**

## ԼՈՒՐԵՐ

# Գոյութիւն Չունի Փաստաթուղթ, Որով Կը Նախատեսուի Լուծարել Արցախի Պետական Հիմնարկները. Շահրամանեան

Արցախի Հանրապետութեան նախագահ Սամուէլ Շահրամանեանը հանդիպած է այն պետական մարմիններու ղեկավարներուն հետ, որոնք կը շարունակեն պաշտօնավարել հասարակական հիմունքներով, յայտնած են Արցախի տեղեկատուական շտաբէն:

Քննարկուած է բռնի տեղահանումէն յետոյ արցախցիներու հիմնախնդիրները, անոնց լուծման ուղղութեամբ առանձնացուած են առաջարկութիւններ:


Արցախի նախագահ Սամուէլ Շահրամանեան

Ներկայացնելով կատարուած ու կատարուող աշխատանքները՝ նախագահ Շահրամանեան ընդգծած է 2024 թուականին զանոնք շարունակելու անհրաժեշտութիւնը, Ստեփանակերտի քաղաքապետին եւ շրջվարչակազմերու ղեկավարներուն յանձնարարած է շարունակել գոյքագրել բռնի տեղահանուած քաղաքացիներուն խնդիրներն ու պարբերաբար ներկայացնել կառավարութեան:

Անդրադառնալով վերջին շրջանին լայն քննարկում ստացած նախագահին՝ Սեպտեմբեր 26-ի հրամանագրին՝ Սամուէլ Շահրամանեան ընդգծած է, որ Արցախի Հանրապետութեան իրաւական դաշտին մէջ գոյութիւն չունի փաստաթուղթ, որով կը նախատեսուի լուծարել պետական հիմնարկները, յայտնած են Արցախի տեղեկատուական շտաբէն:

ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Տարօն Ջախոյեանը, անդրադառնալով Շահրամանեանի այս յայտարարութեան, նկատած է՝ Լեռնային Ղարաբաղը լուծարեցին, զէնքերը յանձնեցին, ժողովուրդը տեղահանեցին, հիմա Երեւանին մէջ «փրկիչ» կը խաղան:

Ըստ Ջախոյեանի՝ ԼՂ իրաւական դաշտին մէջ գոյութիւն չունէր նաեւ փաստաթուղթ, որով կը նախատեսուէր զէնքերը յանձնել:

«Եթէ ոմանք գտնում են, որ ԼՂ պետական հիմնարկները պէտք է շարունակեն գործել Հայաստանում, ապա պէտք է հաշուի առնեն, որ այդ պետական հիմնարկները պէտք է լուծեն ԼՂ հայերի ընկերային, կրթական, առողջական, կենցաղային ու կեցավայրի խնդիրները, այդ թւում՝ նաեւ ԼՂ հայերի՝ դրամատներից վերցրած վարկերի հարցը: Կարո՞ղ են լուծել, ի հարկէ՝ ոչ: Ցանկութեան դէպքում կարող են սկսել վարկերի մարումից», ընդգծած է կառավարութեան անդամը:

Իսկ եթէ ոմանք, ըստ Ջախոյեանի, պարապութենէն կը փափաքին պետական պաշտօնեայի կարգավիճակով ապրիլ Հայաստանի մէջ ու ՀՀ քաղաքացիներու հաշուոյն աշխատավարձ ստանալ, այդ պիտի չըլլայ. «Քանի որ ԼՂ-ն լուծարելուց յետոյ դրա պետական հիմնարկների գոյութիւնը Հայաստանում անհնարին է՝ պետութեան մէջ պետութիւն չի կարող լինել, առաւել եւս, որ դա անվտանգային սպառնալիքներ է ստեղծում Հայաստանի համար»:

# Որեւէ Միջազգային Փաստաթուղթի Ես Չեմ Հանդիպած, Ուր Քաղաքական Բանտարկեալ Եզրոյթը ՀՀ-ի Վերաբերեալ Կիրառուի. Աննա Վարդապետեան

«Որեւէ միջազգային փաստաթղթի ես չեմ հանդիպել, որտեղ քաղաքական բանտարկեալ եզրոյթը ՀՀ-ի վերաբերեալ կիրառուի, դրանք տեղական ձեւակերպումներ են: Կանգնել ու յայտարարել, որ նախկինում պաշտօն զբաղեցնող անձը, որը մեղադրւում է փտածութեան յանցագործութեան մէջ, քաղաքական բանտարկեալ է, ոչ մի իրաւական կանոնի մէջ չի տեղաւորւում»: Այս մասին Առաջին ալիքին տուած հարցազրոյցին ըսած է ՀՀ գլխաւոր դատախազ Աննա Վարդապետեանը՝ անդրադառնալով լրագրողի հարցումին, թէ արդեօք Հայաստանում տեղի կ'ունենա՞ն քաղաքական հետապնդումներ կամ քաղաքական բանտարկութիւններ:


ՀՀ գլխաւոր դատախազ Աննա Վարդապետեան

Ինչ կը վերաբերի կալանքներուն, ապա Վարդապետեան նշեց. «Այդ մասով տարբեր մօտեցումներ կան: Օրինակ՝ նախաքննական մարմիններն էլ պնդում են, որ այ դատարանները հակուած չեն ամենախիստ խափանման միջոցը տալու, յատկապէս, որ այսօր տնային կալանք հասկացութիւնը ունենք եւ աւելի շատ ունենք տնային կալանքը: Այս առումով իմ գնահատականը այն է, որ կալանքները մեծ թիւ չեն կազմում»:

www.massispost.com

# Քոչարեանի Փաստաբանները Դատարանէն Կը Պահանջեն Վերացնել Լեւոն Քոչարեանի Ու Սիրուշոյի Գոյքին Վրայ Դրուած Արգելանքը

Ռոպերթ Քոչարեանի փաստաբանները Հակափտածութեան դատարանէն կը պահանջեն վերացնել երկրորդ նախագահի որդիին ու հարսին գոյքին եւ դրամական միջոցներուն վրայ դրուած արգելանքը: Ապօրինի գոյքի բռնագանձման գործով պետութիւնը արգելանք դրած է նաեւ, մասնաւորապէս, Լեւոն Քոչարեանին ու անոր կնոջը՝ յին պատկանող աւելի 21 միլիառ դրամի, շուրջ 52 միլիոն տոլարի ու «Սիրուշօ Փրոտաքշըն» ընկերութեան վրայ:


Երգչուհի Սիրուշօ

Երկրորդ նախագահին փաստաբանները կը պնդեն՝ որեւէ հիմք չկայ նախկին նախագահին չպատկանող գոյքերու եւ դրամական միջոցներու վրայ արգելանք դնելու համար: «Կողմի միջնորդութիւնն էլ այն էր, որ եթէ այդ ընկերութեան հետ կապուած պահանջ չկայ, ի՞նչ իմաստ ունի այդ ապահովման միջոցները, ինչին ես առարկութիւն չներկայացրի, որովհետեւ այդ ընկերութեանը պահանջ չունենք, կիրառուած ապահովման միջոցներն էլ ենթակայ են վերացման», ըսաւ ան:

Իսկ ինչ կը վերաբերի աւելի քան 21 միլիառ դրամի վրայ դրուած արգելանքի վերացման, Դատախազութիւնը այս մասով առարկութիւն ունի. «Մեր դիրքորոշումն այն է, որ դրամական միջոցների վրայից ամբողջութեամբ կիրառուած ապահովման միջոցները ճիշդ չի լինի հանել, որովհետեւ այդ դրամական միջոցների մէջ ներառուած են նաեւ Ռոպերթ Քոչարեանին վերագրուող որոշակի միջոցներ, եւ այդ մասով պէտք է կիրառուած ապահովման միջոցները պահպանուեն»:

Պետութիւնը նախկին նախագահէն ու ընտանիքի անդամներէն կ'ուզէ բռնագանձել աւելի քան 60 միլիոն տոլարի գոյք ու դրամական միջոցներ: Բռնագանձման ցանկին վրայ են Երեւանի մէջ գտնուող քանի մը տասնեակ գոյք, ինքնաշարժի կայանատեղիներ ամենակեդրոնին՝ Հիւսիսային պողոտային վրայ, քանի մը դրամատուներու մէջ բաժնետոմսեր, ինքնաշարժներ, ներդումներ:

# Հայաստանի Կառավարութիւնը Իր Վրայ Պիտի Վերցնէ ԼՂՀ Կառավարութեան Եւ Քաղաքացիներու Ֆինանսական Պարտաւորութիւններուն Մեծ Մասը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան կառավարութեան, վերջինիս կողմէ ստեղծուած հիմնադրամներու, ԼՂՀ իրաւաբանական եւ ֆիզիքական անձերու վերակառուցման ենթակայ պարտաւորութիւնները (պարտատոմսեր եւ վարկեր) Հայաստանի ֆինանսադրամատնային համակարգի հանդէպ կը կազմեն շուրջ 315 միլիառ դրամ, Հայաստանի կառավարութիւնը կը պատրաստուի իր վրայ վերցնելու այդ բեռին մեծ մասը:


ՀՀ ելեւմուտքի նախարար Վահէ Յովհաննիսեան

«Հայաստանի Հանրապետութեան 2023 թուականի պետական պիւտճէի մասին» օրէնքին մէջ լրացումներ կատարելու մասին նախագիծը Ազգային Ժողովի արտահերթ նիստին ներկայացուց Հայաստանի ելեւմուտքի նախարար Վահէ Յովհաննիսեանը:

«Լեռնային Ղարաբաղի կառավարութեան եւ վերջինիս կողմից ստեղծուած հիմնադրամների, Լեռնային Ղարաբաղի իրաւաբանական եւ ֆիզիքական անձանց վերակառուցման ենթակայ պարտաւորութիւնները (պարտատոմսեր եւ վարկեր) ՀՀ ֆինանսադրամատնային համակարգի հանդէպ 2023 թուականի Դեկտեմբերի 29-ի դրութեամբ կը կազմեն շուրջ 315 միլիառ դրամ, որոնց գերակշիռ մասի սպասարկումը, (մայր գումարի եւ տոկոսավճարների մարումները) Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծուած իրավիճակով պայմանաւորուած, անհնար է դարձել», ըսաւ Յովհաննիսեան:

Ան ընդգծեց՝ նշուածը յառաջ կը բերէ շարք մը բացասական վտանգեր, մասնաւորապէս՝ ՀՀ ֆինանսադրամատնային համակարգի դրամագլուխի էական կորուստներ եւ ֆինանսական կայունութեան խաթարում, ֆինանսական ցուցանիշերու եւ դրամատուներու վարկանիշներու էական վատթարացում, ֆինանսական ցուցանիշերու վատթարացման արդիւնքով վարկաւորման կշռոյթներու անկում, հետեւաբար տնտեսական աշխուժութեան նուազում եւ Լեռնային Ղարաբաղի բնակչութեան առանձին խումբերու վարկունակութեան էական վատթարացում ստեղծուած ընկերային ծանր պայմաններուն մէջ:

## ԼՈՒՐԵՐ

# Միրզոյեանն Ու Թասմակամպեթովը Քննարկած Են ՀԱՊԿ Գործունէութեան Առնչուող Հարցեր



Արարատ Միրզոյեան կ՚ընդունի ՀԱՊԿ գլխաւոր քարտուղար Իմանկալի Թասմակամպեթովին

*Դեկտեմբեր 21-ին ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան ընդունած է Հաւաքական անվտանգութեան մասին պայմանագրի կազմակերպութեան գլխաւոր քարտուղար Իմանկալի Թասմակամպեթովը:*

*Զրուցակիցները քննարկած են ՀԱՊԿ գործունէութեան առնչուող հարցեր:*

*ՀԱՊԿ գլխաւոր քարտուղարը ՀՀ արտաքին գործերու նախարարին տեղեկացուցած է 2023 թուականի Նոյեմբերին Մինսքի մէջ կայացած ՀԱՊԿ Հաւաքական Անվտանգութեան Խորհուրդի Նստաշրջանի եւ ՀԱՊԿ Արտաքին Գործերու Նախարարներու Խորհուրդի, Պաշտպանութեան Նախարարներու Խորհուրդի եւ Անվտանգութեան Խորհուրդի Քարտուղարներու Կոմիտէի համատեղ նիստին արդիւնքներուն մասին:*

*Հանդիպման ընթացքին Արարատ Միրզոյեանը եւ Իմանկալի Թասմակամպեթովը մտքեր փոխանակած են տարածաշրջանին մէջ ստեղծուած իրավիճակի, փոխադրութեան եւ տնտեսական փոխկապակցուածութեան զարգացման ուղղուած նախագիծերու, այդ շարքին՝ ՀՀ կառավարութեան կողմէ մշակուած «Խաղաղութեան Խաչմերուկ» հայեցակարգին վերաբերեալ:*

# Հայաստանը Յստակ Որոշած Է Փոխել Իր Արտաքին Քաղաքականութիւնը Եւ Հեռանալ Մոսկուայէն. ՆԱԹՕ-ի Յատուկ Ներկայացուցիչ

*ՆԱԹՕ-ն շատ լաւատես է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի ստորագրած համատեղ հռչակագրին վերաբերեալ:*

*Վրաստանի Առաջին ալիքին տուած հարցազրոյցին այս մասին յայտնած է Կովկասի եւ Կեդրոնական Ասիոյ մէջ ՆԱԹՕ-ի յատուկ ներկայացուցիչ Խավիեր Քոլոմինան:*

*«Մենք կը կարծենք, որ սա շատ լաւ նորութիւն է: Մենք կ՚աջակցինք Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման: Մենք կ՚աջակցինք ԵՄ-ի եւ ԱՄՆ-ի ջանքերուն այս գործընթացին մէջ, ինչպէս նաեւ Հայաստանի եւ Ատրպէյճանի կողմէ երկկողմ հիմունքներով ձեռնարկուող ջանքերուն: Մեզի համար իսկապէս կարեւոր է, որ կայունութիւնը կովկասեան տարածաշրջանին մէջ պահպանուի ոչ միայն այն աշխատանքին շնորհիւ, որը մենք կ՚ընենք Վրաստանի մէջ, այլ նաեւ այն կայունութեան միջոցով, որ կրնայ հաստատուիլ Հայաստանի եւ Ատրպէյճանի մէջ», ըսած է ան:*



ՆԱԹՕ-ի յատուկ ներկայացուցիչ Խավիեր Քոլոմինա

*Անդրադառնալով հարցումին, թէ կը տեսնէ՞ Երեւանի շահագրգռուածութիւնը ՆԱԹՕ-ի հետ մերձեցման հարցով, Քոլոմինան նշած է, որ Հայաստանը շատ յստակ որոշած է փոխել իր արտաքին քաղաքականութիւնը եւ որոշակիօրէն հեռանալ Մոսկուայէն. «Այդ այն է, ինչ մենք կը խրախուսենք: Հայերը ազատ են իրենց որոշումները կայացնելու մէջ, բայց անոնք որոշած են այդ ընել, եւ ես կը կարծեմ, որ անոնք արդէն կը սկսին մօտենալ մեզի՝ աւելի շատ համագործակցութիւն խնդրելով, աւելի շատ քաղաքական երկխօսութիւն պահանջելով, աւելի շատ ՆԱԹՕ-ի ներկայութիւն պահանջելով: Մենք կը սատարենք մեր գործընկերներու որեւէ որոշում, որ, մեր կարծիքով, օգտակար է տարածաշրջանի կայունութեան համար: Սա շատ կարեւոր է մեզի համար»:*

# Խաղաղութիւնը Երբեք Այսքան Մօտ Չէ Եղած. Ալէն Սիմոնեան

*Խաղաղութիւնը երբեք այսքան մօտ չէ եղած, լրագրողներու հետ զրոյցին յայտնեց Ազգային Ժողովի Նախագահ Ալէն Սիմոնեանը՝ նշելով, որ այդ վստահութիւնը նաեւ պայմանաւորուած է ՀՀ տարածքային ամբողջականութիւնը ճանչնալու վերաբերեալ Ատրպէյճանի ղեկավարութեան յայտարարութիւններով:*

*Ալէն Սիմոնեանը կարծիք յայտնեց, որ խաղաղութեան պայմանագիրը 2024 թուականին կեանքի կը կոչուի:*

*Լրագրողներու հարցին՝ թէ ինչո՞վ պայմանաւորուած է այդ վստահութիւնը, Ալէն Սիմոնեան պատասխանեց. «Դա պայմանագրի քննարկման հիման վրայ է, որովհետեւ շատ աշխոյժ փոխանակում ենք ու կառուցողական քննարկում է գնում: Նաեւ պայմանաւորուած է Ատրպէյճանի ղեկավարութեան յայտարարութիւններով առ այն, որ իրենք ճանաչում եմ Հայաստանի Հանրապետութեան*



Ազգային Ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան

*տարածքային ամբողջականութիւնը: Ինչ վերաբերում է չստացուող հանդիպումներին, այո՛, դա խնդիր է, բայց հանդիպումները եւ քննարկումները շարունակւում են ու շարունակուելու են»:*

# «Խաղաղութեան Պայմանագիրը Ամէն Ինչ Պիտի Չլուծէ 100 Տոկոսով». Պայրամով

*Խաղաղութեան պայմանագիրը ամէն ինչ 100 տոկոսով պիտի չլուծէ. ատրպէյճանական հեռուստատեսութեան տուած հարցազրոյցին այդ մասին յայտնած է Ատրպէյճանի արտաքին գործերու նախարար Ճէյհուն Պայրամովը:*

*Անոր խօսքով՝ Ատրպէյճանն է խաղաղութեան համաձայնագրի հետ կապուած բոլոր կարեւոր նախաձեռնութիւններուն հեղինակը. «Գործընթացը կախուած չէ մէկ կողմի ցանկութենէն: Կարեւոր է, որ երկու կողմերն ալ համապատասխան քայլեր ձեռնարկեն: Ատրպէյճանի ինքնիշխանութեան ամբողջական վերականգնումէն յետոյ մենք ուշադիր կը հետեւինք Հայաստանի քաղաքական ղեկավարութեան ուղերձներուն: Մենք նաեւ որոշ դրական արձագանգներ կը լսենք»:*

*Գերատեսչութեան ղեկավարը յայտնած է, որ պաշտօնական Պաքուն խաղաղութեան պայմանագրի վերաբերեալ առաջարկներու հերթական փաթեթը Երեւանէն ստացած է այս տարուան Նոյեմբերի վերը: «Առաջարկութիւններու փաթեթը, որ մեր կողմէ մշակուած է մէկ ամսուայ ընթացքին, ներկայացուած է Հայաստանին: Գործընթացը կը շարունակուի: Կը կարծեմ՝ հանդիպումները պիտի կայանան 2024 թուականին: Մենք իրատեսօրէն ու լաւատեսօրէն կը նայինք այս հարցին: Միաժամանակ, երբ մենք կը խօսինք խաղաղութեան պայմանագրի մասին, պէտք է հասկնանք, որ այն ամէն ինչ պիտի չլուծէ 100 տոկոսով», ըսած է Պայրամով:*



Ատրպէյճանի արտաքին գործերու նախարար Ճէյհուն Պայրամով

# Պաշտօնական Երեւանը Կը Հաստատէ՝ Ստացած Է Պաքուի Նոր Առաջարկները

*Պաշտօնական Երեւանը կը հաստատէ՝ ստացած է խաղաղութեան պայմանագրի նախագիծին շուրջ Պաքուի նոր առաջարկները, «Ազատութեան» տեղեկացուց Հայաստանի Արտաքին գործերու նախարարութեան խօսնակ Անի Բադալեանը:*

*Այն, որ Ատպէյճանը Հայաստանին փոխանցած է Խաղաղութեան պայմանագրի շուրջ առաջարկութիւններու նոր փաթեթը, մէկ օր առաջ պետական AzTV-ին տուած հարցազրոյցին ընթացքին տեղեկացուցած էր Ատրպէյճանի արտաքին գործերու նախարարը՝ առանց փակագիծեր բանալու անոնց բովանդակութեան վերաբերեալ: Ճէյհուն Պայրամով միայն շեշտած է, որ խաղաղութեան պայմանագիրը չի նշանակեր բոլոր հարցերու 100 տոկոսանոց լուծում:*

# 2023թ. Նոյեմբերին Եկամուտ Ստացող Աշխատատեղերու Թուաքանակը Կազմած Է 737.866

*Պետական Եկամուտներու Կոմիտէն կը տեղեկացնէ, որ հարկ վճարողներու կողմէ 2023 թուականի Նոյեմբեր ամսուայ համար ներկայացուած եկամտային հարկի եւ ընկերային վճարի հաշուարկներու տուեալներով՝ եկամուտ ստացող աշխատատեղերու թուաքանակը կազմած է 737.866, ինչը գերազանցած է նախորդ տարուայ նոյն ամսուայ ցուցանիշը՝ 36.435-ով կամ 5,2%-ով:*

## Թող Մօտենայ Հայաստանի եւ Ատրպէյճանի Միջեւ Հաշտեցման Օրը. Հռոմի Պապ

*Հռոմի Ֆրանչիսկոս պապը հաւատացեալներուն ուղղուած Սուրբ Ծննդեան ուղերձին մէջ դատապարտած է պատերազմները, որոնք կը սնուին զէնքի արտադրութեամբ:*

*«Պատերազմը միշտ ճանապարհորդութիւն է առանց նպատակակէտի, պարտութիւն՝ առանց յաղթողներու, խելագարութիւն՝ առանց արդարացումներու: Բայց պատերազմին «ոչ» ըսելու համար պէտք է «ոչ» ըսել զէնքին: Եթէ մարդու սիրտը դժգոհ է ու վիրաւոր, իր ձեռքին ան պիտի գտնէ մահուան գործիքը եւ վաղ թէ ուշ զայն պիտի օգտագործէ: Իսկ ինչպէ՞ս կարելի է խօսիլ խաղաղութեան մասին, եթէ զէնքի արտադրութիւնը, վաճառքը, առեւտուրը կ'աճին: Ես կը խնդրեմ ձեզ դադրեցնել ռազմական գործողութիւնները, որոնք կը յանգեցնեն անմեղ զոհերու», ըսած է պապը:*



Հռոմի Ֆրանչիսկոս պապը

*Հռոմի պապը խօսած է նաեւ Հայաստանի եւ Ատրպէյճանի յարաբերութիւններէն:*

*«Նայելով Մանուկ Յիսուսին՝ ես կ'աղօթեմ Ուքրանիոյ խաղաղութեան համար, մենք մեր հոգեւոր մտերմութիւնը կը յայտնենք անոր նահատակ ժողովուրդին: Թող մօտենայ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ լիակատար հաշտեցման օրը: Թող անոր նպաստեն մարդասիրական նախաձեռնութիւնները, անոնց վերադարձը, որոնք լքած են իրենց տուները, եւ որեւէ համայնքի կրօնական աւանդոյթներու եւ պաշտամունքի վայրերու նկատմամբ յարգանքը», ըսած է Կաթոլիկ եկեղեցւոյ հոգեւոր առաջնորդը:*

## Տեղի Ունեցած Են Հայ-Ֆրանսական Ռազմաքաղաքական Խորհրդակցութիւններ



Ալիս Ռուֆօ-Լեւոն Այվազեան հանդիպում Փարիզի մէջ

*Փարիզի մէջ տեղի ունեցած են հայ-ֆրանսական երկկողմ ռազմաքաղաքական խորհրդակցութիւններ, տեղեկացուցած է ՀՀ Պաշտպանութեան նախարարութիւնը:*

*Ըստ հայկական կողմին՝ քննարկուած են միջազգային եւ տարածաշրջանային անվտանգութեան առնչուող խնդիրներ, նաեւ համագործակցութեան օրակարգային հարցեր, ձեռք բերուած են շարք մը պայմանաւորուածութիւններ:*

*Այլ մանրամասնութիւններ նախարարութիւնը չէ հաղորդած, միայն կը նշուի, որ հայկական պատուիրակութիւնը գլխաւորած է Պաշտպանութեան նախարարութեան Պաշտպանական քաղաքականութեան եւ միջազգային համագործակցութեան վարչութեան պետ Լեւոն Այվազեանը, իսկ ֆրանսական կողմէ խորհրդակցութիւնները վարած է Ֆրանսայի Զինուած Ուժերու նախարարութեան Միջազգային յարաբերութիւններու եւ ռազմավարութեան տեսչութեան տնօրէն Ալիս Ռուֆօն:*

## ԼՂ-ի Մէջ Պենզինի Պահեստի Պայթումին Հետեւանքով Զոհուած Է 218, Վիրաւորուած՝ 120 Քաղաքացի

*Քննչական կոմիտէի վերջին տուեալով՝ Լեռնային Ղարաբաղի մէջ պենզինի պահեստի պայթումին հետեւանքով զոհուած է 218, վիրաւորուած՝ 120 քաղաքացի: Այդ մասին «Առաջին ալիքին» յայտնած են Քննչական կոմիտէէն:*

*ՔԿ-ն մանրամասնած է, որ պայթումը տեղի ունեցած է փակ տարածքի մէջ, ուր եղած է 42 հազար լիթր բենզին: Պայթումին պատճառը պարզելու համար քննութիւնը կը շարունակուի:*

*21 քաղաքացի անհետ կորսուած կը համարուի, իսկ զոհուած քաղաքացիներէն երեքին ինքնութիւնը դեռ չէ պարզուած:*

*Յիշեցնենք՝ Սեպտեմբեր 25-ին Ստեփանակերտ-Ասկերան ճանապարհի յարակից տարածքին՝ պենզինի պահեստին մէջ, ուժեղ պայթում տեղի ունեցած էր:*

## Լրագրողները Այցելեցին Հիւսիսարեւելեան Մարտական Յենակէտ Եւ Զօրամաս



*ՀՀ Պաշտպանութեան նախարարութեան նախաձեռնութեամբ հաւատարմագրուած լրատուամիջոցներու ներկայացուցիչներէն կազմուած լրագրողական խումբ մը այցելած է ՀՀ հիւսիսարեւելեան հատուածին մէջ տեղակայուած զօրամաս եւ մարտական յենակէտ:*

*Նախ լրագրողները ծանօթացան զինուորներու առօրեային, զօրամասին մէջ տեղի ունեցող ուսումնական պարապմունքներու ընթացքին եւ կենցաղային պայմաններուն, ինչպէս նաեւ այց կատարեցին մարտական դիրքեր, ծանօթացան դիրքերու կահաւորուածութեան ու ճարտարապետական աշխատանքներու ընթացքին: Կը կառուցուէր նաեւ թիկունքի մասնաշէնքը, զօրամասի մարզադահլիճը:*

*Տավուշի N զօրամասի հրամանատար գնդապետ Վահան Սարգսեանը, խօսելով ատեստաւորման գործընթացի մասին, ըսաւ որ դիմորդները բաւական շատ են, պայմանագրայիններու մեծ հոսք կայ: Դիմորդներուն մեծ մասը դրական գնահատական կը ստանայ, սակայն ցած է գերազանց ստացողներու թիւը, կը նշէ գնդապետը:*

*Զօրքի բարոյահոգեբանական վիճակը, ըստ զօրամասի հրամանատարին, բարձր է, պատերազմէն յետոյ աւելի բարձրացած է:*

*Սարգսեան նշեց, որ դիրքերուն մէջ իրավիճակը յարաբերական կայուն է, կրակոցներ գրեթէ չեն ըլլար, իրենք ալ մշտապէս պատրաստ են կատարելու իրենց առջեւ դրուած խնդիրը:*

## Կառավարութիւնը Պիտի Փոխհատուցէ Արցախցի Ուսանողներու Ուսման Վարձը

*ՀՀ կառավարութիւնը պիտի փոխհատուցէ Լեռնային Ղարաբաղէն բռնի տեղահանուած 935 ուսանողներու ուսման վարձը: ՀՀ կառավարութեան նիստին համապատասխան նախագիծը ներկայացուց Կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնամարզի նախարար Ժաննա Անդրէասեանը:*

*Ըստ Անդրէասեանի՝ կայ ուսանողներու երկու խումբ, որոնց ուսման վարձի ֆինանսաւորումը եկած էր կա՛մ իրենց ընտանիքներուն կողմէ, որոնք այժմ յայտնի պատճառներով զրկուած են այս աջակցութիւնը ցուցաբերելու հնարաւորութենէն, կա՛մ անոնց վճարումը կատարուած էր ԼՂ-ի իշխանութիւններուն կողմէ, եւ այժմ նոյնպէս այդ ֆինանսաւորման աղբիւրը հնարաւոր չէ շարունակել:*

*«Այս երկու խմբի ուսանողների համար էլ կայացուեց որոշում, որովհետեւ նրանց համար կրթութեան իրաւունքի վերականգնման խնդիր չունենք, որովհետեւ այս ուսանողները մեր ուսումնական հաստատութիւնների ուսանողներ են եղել, եւ շարունակում են լինել: Բայց ունէինք ֆինանսական աջակցութեան յստակ խնդիր: Երկու նախագծերից մէկով կարգն է հաստատւում, միւսով միջոցներ են վերաբաշխւում:*

*«Շուրջ 935 ուսանողի մասին է խօսքը, որոնցից 860-ը բարձրագոյն ուսումնական կրթութեան, յետ բարձրագոյն ուսումնական կրթութեան համակարգից են, 75 ուսանող՝ ՄԿՈՒ համակարգից, որոնց մասին տեղեկատուութիւն է հաւաքուել:*

## Ատրպէյճանի Միլի Մեճլիսը «Արեւմտեան Ատրպէյճանցիներու՝ Իրենց Պատմական Հայրենիք Վերադառնալու» Մասին Յայտարարութիւն Ընդունած Է

*Ատրպէյճանի Օրէնսդիր մարմինը «Արեւմտեան ատրպէյճանցիներու՝ իրենց պատմական հայրենիք վերադառնալու» մասին յատուկ յայտարարութիւն ընդունած է:*

*Միլի Մեճլիսին մէջ ընդունուած փաստաթուղթին համաձայն «Արեւմտեան ատրպէյճանցիներու պատմական հայրենիքը» Հայաստանն է:*

*«Ատրպէյճանցիները դարեր շարունակ ապրած են ներկայիս Հայաստանի տարածքին: Պատմական փաստաթուղթերն ու քարտէզները կը վկայեն, որ այստեղ ապրող բնակչութեան մեծ մասը ատրպէյճանցիներ եղած են», «ԱՊԱ» գործակալութեան փոխանցմամբ ըսուած է յայտարարութեան բնագրին մէջ, որ խորհրդարանին մէջ ներկայացուցած է «Արեւմտեան Ատրպէյճանի համայնքի» նախագահ, պատգամաւոր Ազիզ Ալեքպերլին:*

# Յուսալքութիւնը Մահ է

ԲԱԳՐԱՏ ԷՍԴՈՒԳԵԱՆ

*Եկած ենք տարեվերջի մը շեմին: Այս տարուայ վերջընթեր յօդուածն է, որ կը կարդաք: Ապագայի ու-սումնասիրութիւններու մէջ բազմաթիւ դէպքեր պիտի յիշատակուին 2023-ի հասցէագրումով:*

*Նոյնիսկ տարին տակաւին չաւարտած ըլլալ Հայաստանեան ապրումներու, ըլլայ Թուրքիոյ զարգացումներու կամ համաշխարհային վերիվայրումներու առումով որքան զարմանալի եղելութիւններ կը գրանցուին: Տարեսկիզբին ո՞վ կը մտաբերէր թէ արցախահայութիւնը քանի մը օրուան թափառումէ ետք պիտի կորսնցնէ իր բազմահազար տարիներու պապենական երկիրը:*

*Կազա իր սովորական առօրեան պիտի ապրէր, եթէ «ՀԱՄԱՍ» յանկարծակի յարձակումով մը ցիրուցան չընէր Իսրայէլի բանակի այդքան մեծ վստահութիւն ընդձեռած անվտանգութեան գմբէթը:*

*Հիմա շատեր կը մտմտան արդեօք այդ գմբէթը պատահականօրէն անգործածելի դարձաւ՝ թէ ոչ, ալ աւելի մտահոգիչ վարկածով մը, այս մէկը Նեթանյահուի հետ ծրագրուած գործողութիւն մըն էր ակնկալուած հետեւանքները ապահովելու համար:*

*Իսկապէս կան հարցումներ, որոնք կրնան սարսափ պատճառել: Սակայն հետեւանքը պարզ է բոլորիս համար՝ 7 Հոկտեմբերէն այս կողմ սպաննուած պաղեստինցիներու թիւը, եթէ նկատի ունենանք աւերակներուն տակը մնացածներն ալ պիտի գերազանցէ 20 հազարը:*

*Իսկապէս մեծ ողբերգութեան մը մասին է, որ կը խօսինք: Ճիշդ է՝ Կազայի մէջ պատահածները անընդունելի են, բայց անդին կայ շատ աւելի մտահոգիչ, այլ երեւոյթներ:*

*Թուրքիոյ մէջ ականատես կ'ըլլանք պետական համակարգի հետզհետէ փճացման: Ինչպէս կ'ըլլայ, որ ամբողջ պետութիւն մը պատանդ դառնայ համաշխարհային յանցագործ կազմակերպութիւններու ձեռքը: Օր չանցնիր, որ յանցագործ աշխարհի հանրածանօթ դէմքեր բերման ենթարկուին Թուրքիոյ տարբեր քաղաքներու մէջ: Նիւթ մը՝ որու պրպտումով անհամար կեղտ հրապարակ պիտի թափի տեղի տալով նորանոր հարցումներու:*

*Այս բոլորը ունին իրենց բացատրութիւնները: Բայց իւրաքանչիւր բացատրութիւն իր հետ պիտի բերէ գայթակղութեան նոր էջ մը:*

*Այդ է պատճառը, որ նման խայտառակութիւնները մինչեւ տեղ մը կը պարզուին եւ ապա ամէն ինչ կը մնայ թանձր մշուշի մը ետին:*

*Այս օրերուն յաճախ կը խօսուի ֆութպոլային դաշտերու վրայ ծաւալած անօրինութիւններու մասին: Մեր զարմանքով իրազեկ դարձածները շատերու համար բոլոր ծալքերով յայտնի խարդախութիւններ են:*

*Այդ աշխարհի մարդիկ գիտեն ամէն ինչի գործադրման, կիրարկման եղանակները: Մենք ենք որ ափիբերան կը մնանք լսելով այս բոլորը:*

*Իսկապէս ալ մանրամասնութիւններով ծրագրուած խաղի մը ականատեսներն ենք եւ ամէն ինչ կը կայանայ որոշ ծրագրի մը հիման վրայ:*

*Այդ միամիտներու ափսոսանքներն են, որ յաճախ կ'ընդվզին. «Թուրքիան այս բանին արժանի չէր» ըսելով:*

*Այս հաստատումը ընել կարելի է երկրի Կրթութեան Նախարարի հասցէին, քանի որ այս վերջինս կը յամառի ուսման համակարգը որոշ աղանդներու փոխանցելու ռազմավարութեան վրայ: Իր ըրածը կ'արդարացնէ ըսելով որ, «Եթէ այդ աղանդները չ'ըլլան, ուսման համակարգին պիտի իշխեն, այնպի-սի մարդիկ, որոնց ցուցմունքով երիտասարդութիւնը լեռ պիտի բարձրանայ ահաբեկիչ ըլլալու հա-մար»:*

*Իսկապէս ալ անհաւատալի պնդում մը, բայց որպէս իրողութիւն բազմած է մեր դիմաց եւ ամէ-նաբարձր ատեանէն կը քարոզէ այս միտքերը: Այս պայմաններու տակ իրաւ ալ ինչպէ՞ս պիտի դիմաւո-րենք նոր տարի մը, ի՞նչ յոյսեր պիտի սնուցենք այս տարեմուտի առթիւ:*

*Կարելի՞ է կ'արծել թէ տարին շրջելով ամէն ինչ լաւ պիտի ըլլայ:*

*Բայց ինչպէս կ'ըսէ Տարօն Աճեմօղլու յուսահատելու պահուն իսկ իրաւունք չ'ունինք յուսալքուելու:*

*«ԱԿՕՍ»*

# Փաշինեան Սան Փեթերպուրկի մէջ

Շարունակուած էջ 1-էն

*րու հասնելու հասունցած անհրաժեշտութիւնը:*

*«Այս ծիրին մէջ, մենք պատրաստ ենք ճկուն մօտեցում ցուցաբերել չլուծուած հարցերի շուրջ ԵԱՏՄ անդամ երկրների շահերի հաւասարակշռութիւնն ապահովելու ուղղութեամբ՝ ԵԱՏՄ ընդհանուր ուժանիւթային շուկաների առաւելութիւններից եւ ներուժից օգտուելու նպատակով», նշած է Փաշինեան:*

*«Մէկ այլ հիմնաւորապէս կարեւոր խնդիր է մեր երկրների տեղեկատուական արհեստագիտութիւնների համայնքների աշխոյժ ներգրաւմամբ թուային արհեստագիտութիւնների ներդրումը պետական առեւտրային գործընթացների գործնական գործունէութեան մէջ:*

*Հայաստանի Հանրապետութեան Կրթութեան եւ Մշակոյթի նախարարութեան աջակցութեամբ Հայաստանի Օպերայի եւ բալետի ազգային թատրոնում տեղի է ունեցել Հայաստանի ազգային հերոս, Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախմբի գեղարուեստական ղեկավար Յովհաննէս Չեքիճեանի 95-ամեակին նուիրուած յոբելեանական երեկոն:*

*Միջոցառմանը ներկայ են եղել ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրէասեանը, նախարարի տեղակալ Դանիէլ Դանիէլեանը, պաշտօնատար այլ անձինք, հոգեւոր դասի ներկայացուցիչներ:*

*Ելոյթ են ունեցել Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբը, Հայաստանի պետական սիմֆոնիկ նուագախումբը եւ անուանի մենակատարներ ու դիրիժորներ:*

*Այս առթիւ՝ Վարչապետ Նիկոլ Փաշինեանը շնորհաւորական ուղերձ է յղել Հայաստանի ազգային հերոս Յովհաննէս Չեքիճեանի 95-ամեայ յոբելեանի առիթով:*

*Ուղերձում ասուած է.*

*«Մեծարգո'յ մաեստրօ,*

*Ջերմօրէն շնորհաւորում եմ Ձեզ ծննդեան 95-ամեայ յոբելեանի առիթով:*

*Ձեր ողջ կեանքն ու աշխատանքային գործունէութիւնը երաժշտարուեստին անմնացորդ նուիրումի փայլուն դրսեւորում են, իրական մտաւորականի կերպարի արտացոլում:*

*Իբրեւ արժանաւոր արուեստագէտ՝ Դուք Ձեր նշանակալի աւանդն ունէք հայ երգչախմբային արուեստի զարգացման գործում:*

Շար.ը էջ 15



# Առաջին Սայեաթնովագէտը՝ Ռուս Բանաստեղծ Եաքով Փոլոնսքի



ՅԱԿՈԲ ՏԻՒՆԵԱՅԵԱՆ

*Անցած Հոկտեմբերին լրացաւ մահուան 125-ամեակը ռուս անուանի բանաստեղծ, պուշկինեան գրական դպրոցի հետեւորդներէն եւ անոր քերթողութեան խոր ազդեցութեամբը աւշայորդած Եաքով Փոլոնսքիի (Ռեազան, 19 Դեկտեմբեր 1819 □ Ս. Փեթերսպուրկ, 30 Հոկտեմբեր 1898):*

*Հայ-ռուս մշակութային կամուրջի խորհրդանիշներէն, այլեւ անոր նախակարապետն հանդիսացող, ժամանակակից հայ գրողներու հետ մտերմութիւն հաստատած եւ ընդհանապէս հայ ժողովուրդի գրականութեան, հայոց սրբութիւններուն նուիրուած քերթուածներ հիւսած քնարերգակ բանաստեղծ Եաքով Փոլոնսքի, սքանչացողներէն մէկն էր հայ մեծ աշուղ Սայեաթ-Նովայի երգարուեստին:*

*Շատ քիչեր գիտեն, թէ Սայեաթ-Նովային նուիրուած առաջին բանաստեղծութիւնները գրած է Եաքով Փոլոնսքին, որուն մէկ գազելը, որ ստեղծուած է հանճարեղ աշուղին տաղերուն խոր ազդեցութեամբ՝ տպուած է 1851-ին. այն ժամանակ, երբ Սայեաթ-Նովայի անունն իսկ դեռ ծանօթ չէր շատ շատերու, երբ սայեաթնովագէտ Գէորգ Ախվերդեա՛նն անգամ դեռ չէր հրատարակած մեծ աշուղին Դավթարը, որ, ինչպէս գիտենք, լոյս տեսած է 1852-ին, Մոսկուա, Ախվերդեանի բացայայտմամբ: Արդ, հետաքրքրասէր ընթերցողը պիտի հարցնէ.- որմէ՞ գիտէր ռեազանցի ռուս բանաստեղծը Սայեաթ-Նովայի մասին:*

*Փոլոնսքիի սայեաթնովագիտութեան մասին որոշ լուսաբանութիւն տալէ առաջ, հարկ է անդրադառնալ հայ անուանի դէմքերու հետ ռուս բանաստեղծին հաստատած կապերուն:*

*Եաքովի հայրը՝ Փեոթր Փոլոնսքին, ռուսական բանակի սպայ էր եւ 1830-ական թուականներուն իշխան Բարսեղ Պեհպուտովի (Պեհպուտեան) մարզպանութեան օրօք կը ծառայէր Երեւանի մէջ եւ կը զբաղեցնէր նորաստեղծ Հայկական մարզի կառավարչութեան յատուկ յանձնարարութիւններու գծով պետի պաշտօնը: Կը կարծուի, թէ հայր Փոլոնսքի այդ շրջանին պատմած է ապագայ բանաստեղծ իր զաւկին Հայաստանի մասին: Աւելին, հայր Փոլոնսքի իր նամակներուն մէջ նկարագրած է աստուածաշնչեան լերան՝ Արարատի վեհաշուք տեսքը, իր զաւկին ալ հաղորդելով Նոյեան տապանի մասին բոլորիս ծանօթ առասպելը: Եւ այդպէս, փոքրիկն կամ պատանի Եաքովի միտքին ու սիրտին մէջ արթնցած է հետաքրքրութիւն ու մեծ սէր դէպի Հայաստանն ու հայ ժողովուրդը, հայոց աշխարհի չքնաղ բնութիւնը:*

*Այսպէս, պատանի Եաքով իր ծննդավայր Ռեազանի երկրորդական վարժարանն աւարտելէ ետք կ'ընդունուի Մոսկուայի համալսարանի իրաւաբանական բաժանմունքը: Այնտեղ, ուսանողական միջավայրի մէջ ան կը ծանօթանայ հայ ուսանողներու, ինչպէս՝ աշխարհահռչակ ծովանկարիչ Յովհաննէս Այվազովսքիին, բանաստեղծ Ռափայէլ Պատկանեանին, բժիշկ-սայեաթնովագէտ Գէորգ Ախվերդեանին եւ ուրիշներու, որոնց հետ կը հաստատէ սերտ կապեր: Նոյն Գէորգ Ախվերդեանէն ան կը լսէ Սայեաթ-Նովայի մասին եւ կը տեսնէ մեծ աշուղի խաղերուն Դավթարը:*



*Եաքով Փոլոնսքի համալսարանը կ'աւարտէ 1844-ին եւ աշխատանքի կ'ուղարկուի Օտեսա, ուր երկու տարի մնալէ ետք, 1846-ին կը տեղափոխուի Կովկաս՝ իր երազած ափը: Այստեղ, ան, նախ կ'ըլլայ «Զակաւկազսքի Վեսթնիք» թերթի խմբագրի օգնական, ապա կը նշանակուի «Կաւկազսքի Քալենտար» տարեգիրքի խմբագիր՝ այդ պաշտօնը վարելով մինչեւ 1851 թուական:*

*Թիֆլիսի մէջ իր գործունէութեան հինգ տարիներու ընթացքին, Փոլոնսքի աշխատանքի բերումով շրջագայութեան կը ձեռնարկէ կովկասեան շարք մը քաղաքներ, մօտիկէն կը ծանօթանայ հայ եւ վրաց ժողովուրդներու պատմութեան, անոնց կեանքին ու կենցաղներուն, կ'այցելէ Երեւան ու այնտեղէն իր աչքով կը տեսնէ Արարատը, կը սքանչանայ անոր գեղեցկութեամբ ու վեհութեամբ: Կովկասեան տարածաշրջանէն ներս ան կը շրջապատուի համբաւաւոր մարդոցմով: Ջինք սիրով կը հիւրընկալէ Գէորգ Ախվերդեանը, որ այդ ժամանակ Մոսկուայէն վերադարձած էր Թիֆլիս: Գրուած է, թէ հաւանաբար այս ժամանակներուն ան ճանչցած է Խաչատուր Աբովեանը՝ հարկաւ վէջինին անյայտացումէն (1848 թ.) առաջ: Փոլոնսքի, աւելի ուշ, խոր ափսոսանքով կ'արտայայտուի «Վէրք Հայաստանի»ի անմահ երգիչին անյայտ կորստեան մասին: Նաեւ այս շրջանին, ուսանողական տարիներէն արդէն իր վաղեմի բարեկամ Գէորգ Ախվերդեանը աւելի խորութեամբ կը ներկայացնէ Սայեաթ-Նովայի տաղերը, որոնք, ինչպէս նշեցինք, մեծ ազդեցութիւն կը գործեն ռուս ապագայ բանաստեղծին ներաշխարհէն ներս:*

*«Կաւկազսքի Քալենտար»ի խմբագիրի պաշտօնը թողելէ ետք, Եաքով Փոլոնսքի 1851-ին կը տեղափոխուի Ս. Փեթերսպուրկ, ուր կը նուիրուի ստեղծագործական աշխատանքի: 1859-1860 թուականներուն կը խմբագրէ «Ռուսքոյէ Սլովօ» հանդէսը, այնուհետեւ, մինչեւ իր կեանքի վերջին օրերը կ'ըլլայ պետական ծառայութեան մէջ. սկիզբը՝ Արտասահմանեան գրաքննչական կոմիտէին, ապա՝ Մամուլի գործերու գլխաւոր վարչութեան խորհուրդին մէջ:*

*Ռուս բանաստեղծներու մէջ առաջի՛նն է Եաքով Փոլոնսքին, որ անսահման սէր է տածած Սայեաթ-Նովայի արուեստին հանդէպ, եւ ինչպէս նշեցինք, հայ մշակոյթի պատմութեան մէջ ան կը հանդիսանայ մեծ աշուղին տաղերը ուսումնասիրող ռուս առաջին թարգմանիչը, սայեաթնովագէտը:*

*Ամենայն Հայոց Բանաստեղծ Յովհաննէս Թումանեան հետեւեալը գրած է Փոլոնսքիի մասին. «Ռուսաց բանաստեղծներից, եթէ չեմ սխալւում, առաջինը Փոլոնսքին է եղել, որ ուշք է դարձրել Սայեաթ-Նովայի վրայ ու հիացել: Փոլոնսքին՝ հանգուցեալ Ախվերդեանի մօտիկ բարեկամը, թերեւս ընկերն է եղել: Նրա մօտ է տեսել Սայեաթ-Նովայի երգերի տետրակը եւ, ծանօթանալով, 1851 թուականին ոգեւորուած մի յօդուած է գրել «Կաւկազ» թերթում, բնորոշել, գնահատել ու երգերից էլ մի քանիսը թարգմանել»: Թումանեան այլ առիթով կրկին անդրադառնալով նոյն նիւթին, աւելցուցած է, որ «Սայեաթ-Նովայի գրական ժառանգութիւնը՝ սկսած 1850-ական թուականներից, առաջին ուսումնասիրողները եղել են նրա կենսագիր եւ հրատարակիչ Գէորգ Ախվերդեանը եւ ռուս բանաստեղծ Եաքով Փոլոնսքին»:*

*Այսպէս, ինչպէս կը տեսնենք, սայեաթնովագիտութեան մէջ Գէորգ Ախվերդեանէն առաջ դափնին կը պատկանի ռուս քնարերգակ բանաստեղծ Եաքով Փոլոնսքիին, որուն կ'իյնայ Սայեաթ-Նովային նուիրուած առաջին բանաստեղծութեան հեղինակն ըլլալու պատիւը: Այդպէս ալ, շուրջ 172 տարի առաջ Սայեաթ-Նովայի մասին Փոլոնսքիի գրած ուսումնասիրութիւնն ու բանաստեղծութիւնը ցայսօր չեն կորսնցուցած իրենց արժէքն ու նշանակութիւնը, ինչպէս որ աւելի քան 109 տարի առաջ (15 Մայիս 1914-ին), Թիֆլիսի Ս. Գէորգ եկեղեցւոյ գաւիթին մէջ հանճարեղ աշուղի մահարձանին բացումով իր սկիզբն առած աւանդական Վարդատօնը ցայսօր ալ չէ կորսնցուցած իր արժէքն ու նշանակութիւնը, նաեւ ընթացքին, բնագրերու լեզուներով ու ռուսերէն թարգմանութեամբ բազմիցս հրատարակուած Սայեաթ-Նովայի խաղերուն լիակատար ժողովածոները, անոնց մասին գրուած շարք մը մեծարժէք մենագրութիւններն ու յօդուածները:*

*1844-ին, 25 տարեկանին, լոյսի բարիքին կու գայ Փոլոնսքիի բանաստեղծութիւններուն երախայրիքը՝ «Գամմաներ»ը, որուն մէջ նկատելի է ռուս բանաստեղծ եւ գրող Միխայիլ Լերմոնտովի ազդեցութիւնը: «Գամմաներ»ուն կը յաջորդէ «Բանաստեղծութիւններ 1845»-ը: Երկրորդին մասին մեծանուն ռուս քննադատ Վիսսարիոն Պելինսքին հանդէս է եկած սուր քննադատութեամբ՝ յստակ աշխարհահայեացքի մը բացակայութիւնը գտնելով բանաստեղծին գիրքին մէջ:*

*1846-1851 թթ. Թիֆլիսեան իր տարիներուն եւ 1851-ին Ս. Փեթերսպուրկ անցնելէ առաջ, Փոլոնսքի հրատարակութեան կը յանձնէ երկու քերթողագիրքեր՝ «Սազանտար» (1849) եւ «Քանի Մը Բանաստեղծութիւն» (1851): Մնալով խորապէս մարդկային ու քնարերգակ բանաստեղծ, այնուհետեւ ան հանդէս կու գայ «Դրոշմուածքներ» (1866), «Խուրձեր» (1871) եւ «Աշնանացան Արտեր» (1876) բանաստեղծական երկերով. իսկ աւելի ուշ՝ 1890-ին, կը հրատարակէ կրօնամիստիկական տրամադրութիւններով առլցուն «Երեկոյեան Ղօղանջ» երկը: Տեղին է նշել, որ ռուս մեծանուն երաժիշտ ու կոմպոզիտոր Չայքովսքի՝ ժամանակակիցն ու հիացողներէն մին ռոմանսի ժանրը զարգացուցած Փոլոնսքիի քերթողութեան, վերջինին բազմաթիւ քերթուածներուն շնորհած է երաժշտական յօրինումներ:*

*Ինչպէս նշուեցաւ, Փոլոնսքի գտնուելով Հայաստան եւ իր խոր սքանչացումը յայտնելով Արարատի վեհաշուք տեսքին՝ գրեց «Արարատ» բանաստեղծութիւնը: Բաց աստի, յայտնի են իր «Մի՛ Սպասիր», «Կովկասից Վերադառնալիս» բանաստեղծութիւնները, զորս ռուս բանաստեղծը նուիրած է հայ գեղեցկուհի Սոֆիա Կուլկազին, որ նաեւ «Թիֆլիսեան Խրճիթներ» պատմուածքի «Դարեջան» պատմական տրամայի կերպարներու նախատիպն է: Փոլոնսքի ըլլալով տաղանդաւոր նկարիչ մըն ալ՝ գծած է նոյն գեղուհի Սոֆիայի դիմանկարը:*

*Հայրենի տաղանդաւոր եւ անուանի բանաստեղծ եւ թարգմանիչ, բազմաթիւ արժէքաւոր քերթողագիրքերու, գրական երկերու թարգմանութեանց հեղինակ, 1982-էն ցայսօր Հայաստանի Գրողներու Միութեան անդամ Գագիկ Դաւթեանի թարգմանութեամբ այս առիթով կ'արժէ ընթերցողին ներկայացնել Եաքով Փոլոնսքիի «Դու Յիշեցրիր Ինձ» բանաստեղծութիւնը.-*

Դու պսակ հիւսելով քո թխլիկ ծամերին,
Յիշեցրիր քո անմեղ, մանկական դէմքով ինձ
Այն բախտը, որ քնում մեզ տրւում է ծրի,-

Շար.ը էջ 15

# Արեւմտահայ Գրագէտներ Նորատիպ օրացոյցի մը 12 էջերը




ՆՈՐԱՅՐ ՏԱՏՈՒՐԵԱՆ

*Գրասեղանիս վրայ կայ նոր լոյս տեսած գեղատիպ օրացոյց մը. «Արեւմտահայ Գրագէտներ. 2024-ի օրացոյց՝ դիմանկարներով եւ գրելու մասին խոհերով»: Այսպէս է խորագրուած ան: Առաջին հայեացքով անոր 12 փայլուն էջերը գիս փոխադրեցին Պոլիս, երեք-չորս տասնամեակ մը ետ, երբ քաղաքս ալ ունէր հայկական նիւթերով օրացոյցեր հրատարակելու գեղեցիկ աւանդութիւնը: Այժմ պոլսահայերը կը բաւարարուին սեղանի օրացոյցով մը: Այդ փոքրադիր օրացոյցի շնորհիւ է որ համաքաղաքացիներս գիտեն, թէ ե՛րբ են ազգային եւ կրօնական տօները: Իսկ հիմա, ահա Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ լոյս կը տեսնէ մէկ այլ օգտաշատ օրացոյց՝ պատի պատկերազարդ օրացոյց, որ ունի խիստ հայկական շունչ եւ կարծես, թէ եկած է կարեւոր բաց մը գոցելու: Երբ կը պատրաստուիմ զայն քիչ վերջ դասարանիս պատին վրայ կախելու, փափաքեցայ ներկայացնել անոր բարեմասնութիւնները եւ ներածութիւնը:*

*Օրացոյցը կը ներկայացնէ 12 հայ գրագիտուհի: Պատրաստուած է երեք տաղանդաշատ հայուհիներու կողմէ. Առաջինը Մարալ Ագթոքմաքեանն է, պոլսահայ գրականագէտ, թարգմանիչ եւ խմբագիր մը: Երկրորդը ամերիկահայ հետազօտող եւ թարգմանիչ Թամար Մարի Պօյաճեանն է, որ կը մասնագիտանայ միջնադարեան գրականութեան մէջ, ան ստորագրած է նաեւ ինքնատիպ բանաստեղծութիւններ: Երրորդը դարձեալ ամերիկահայ, Արփի հրատարակչատան հիմնադիր, գեղանկարիչ Արփի Գրիգորեանն է: Ա. Գրիգորեանն է, որ գծագրած է օրացոյցի ոճաւորուած դիմանկարները:*

*Օրացոյցի կողքի մէջ խմբագրուհիները բացատրած են, թէ այս օրացոյցը ինչո՛ւ պատրաստեցին. «Այս օրացոյցը նուիրուած է Հայ գրողներուն, որոնք կին էին եւ ճիշդ այս պատճառաւ՝ գրական ասպարէզին մէջ, կա՛մ միայն պահ մը երեւան եկան, կա՛մ ալ հազիւ իրենց անունը ձգելէն անմիջապէս վերջ անհետացան մեր յիշողութենէն... 2024-ին իւրաքանչիւր ամիսը գրողով մը կը ներկայացնենք հայկական եւ համայն աշխարհին, մաղթելով ստեղծել հոգատար ուշադրութիւն եւ արդէն յապաղած հետաքրքրութիւն մը մեր ինքնութեան ու յիշողութեան մէջ»:*

*Եւ, ահա օրացոյցի 12 էջերը.*




## Յունուար - Սահակդուխտ (7րդ-8րդ դար)

*Երաժիշտ-բանաստեղծ Սահակադուխտը կը ներկայանայ գեղեցիկ դիմանկարով մը: Ան հագած է մանիշակագոյն տարազ եւ պսակուած է մշտադալար դափնիով մը: Գառնիի ձորի մէջ կուսական կեանք վարած այս հայուհին հմտացած էր երաժտութեան եւ բանաստեղծութեան մէջ, ունէր աշակերտներ, կ'ուսուցանէր վարագոյրի ետեւ նստած: Հոգեւոր երգեր, կցուրդներ եւ «քաղցրաեղանակ» մեղեդիներ յօրինած Սահակդուխտը օրացոյցի վրայ կը ներկայանայ մեծի ծանօթ միակ ստեղծագործութեամբ՝ Աստուածամօր ձօնուած երգի առաջին քառեակով.*

Սրբուհի Մարիամ, անապական տաճար
Եւ կենսատու էութեան ծնող եւ մայր.
Օրհնեալ ես դու կանանց մէջ,
Բերկրեալ տիրամայր եւ կոյս:

## Փետրուար - Սրբուհի Տիւսաբ (1840, Պոլիս - 1901, Պոլիս)

*Գրող, բանաստեղծ, հրապարակախօս, հասարակական-մանկավարժական գործիչ, հայ առաջին վիպասանուհի Ս. Տիւսաբը (ծնեալ՝ Վահանեան) հեղինակն էր երեք վիպակներու. «Մայտա», «Սիրանոյշ» եւ «Արաքսիա կամ Վարժուհին»: Նոր լեզուի՝ աշխարհաբարի պաշտպանութեամբ հանդէս եկած Տիւսաբը լոյս ընծայած էր կանանց հարցերու նուիրուած շարք մը յօդուածներ, ինչպէս՝ «Կանանց դաստիարակութիւնը», «Քանի մը խօսք կանանց անգործութեան մասին», «Կանանց աշխատութեան սկիզբը»: Տիւսաբը բողոքած էր կանանց անազատ վիճակի դէմ, պահանջած էր ուսումի եւ աշխատանքի իրաւունքը: Այս գաղափարախօսութեան ցայտուն արտայայտութիւնն է «Մայտա» վէպը: Գրագիտուհին օրացոյցի իր էջի վրայ կը ներկայանայ այդ վէպէն առնուած մէջբերումով մը.*

*Դուն, Մայտա, կը գանգատիս ընկերութեան անիրաւութենէն. բայց ի՞նչ փոյթ քեզ երբ սիրտ մ'ունիս սիրելու համար, միտք՝ խորհելու, կամք՝ գործելուդ ազատ ես, գործէ, եւ ով որ ազատ է եւ կը գործէ, կարեկցութեան տեղի չի տար: Դո՛ւն տէր ես գործոցդ եւ բախտիդ. անձնուիրութիւն մ'ես արդ եւ ոչ թէ շուք, ձայն մ'ես եւ ոչ արձագանքդ արշալոյսն ես որ օրն կ'աւետէգ ո՛չ, ափսոսալի չես»:*

## Մարտ - Զապէլ Ասատուր, (1863, Պոլիս - 1934, Պոլիս)

*Զ. Ասատուրը բոլորիս յայտնի է իր գրագէտ ամուսնոյն՝ Հրանդ Ասատուրի աշխատակցութեամբ հրատարակած հայերէնի քերականութեան եւ ընթերցանութեան դասագրքերու շարքով, որ կը կոչուէր «Թանգարան»: (Այս յօդուածի հեղինակն ալ Պոլսոյ Մխիթարեան վարժարանի մէջ հայկական գրականութեան ծանօթացած է «Թանգարան»ներ կարդալով): Պոլսոյ հայ դպրոցներու, մասնաւորաբար Էսայեան վարժարանի (18 տարի) հայերէն լեզուի թանկագին ուսուցչուհի Զ. Ասատուրը օրացոյցի վրայ հանդէս կու գայ «Հայ լեզուին» քերթուածով.*

Դո՛ւն առաջին վանկ շրթունքիս, առաջին վանկ իմ հոգւոյս,
Նախկի՛ն հնչիւն իմ մանկական լեզուիս հեզ,
Որով լացի ու երգեցի միշտ յուզումներս, իղձս ու յոյս,
Իմ մայրենի քաղցրի՛կ լեզուս, ողջո՜յն քեզ:

## Ապրիլ - Զապէլ Եսայեան (1878, Պոլիս - 1943 (՞) Սիպերիա)

*Ազգային-հասարակական գործիչ, ըստ Արշակ Չօպանեանի՝ «հայոց մեծագոյն գրագիտուհի» Զապէլ Եսայեանը, որ իր ամբողջ կեանքի մէջ, մինչեւ Պաքուի բանտի մէջ գրած նամակները, եղաւ տոկուն եւ ցոյց տուաւ խիզախ կեցուածք: Ան օրացոյցի մէջ կը ներկայանայ բոցաշունչ խօսքերով.*

*«Ես պիտի հետապնդեմ իմ երազս ամէն ճանապարհներու վրայ եւ հոգիս պիտի ստանայ իր ազատութիւնը: Կ'ուզեմ իմ յոյսս եւ հաւատքս ներշնչել ամենուն, առատաձեռն սերմանել ամենուրեք, կ'ուզեմ ըսել ոչ թէ աքսորի ընկերներ, այլ դառնանք պայքարի ընկերներ ու միասին փնտռենք ներշնչման մաքուր եւ հարազատ աղբիւրները»*

## Մայիս - Հերանոյշ Արշակեան (1887, Պոլիս - 1905, Պոլիս)

*Վաղամեռիկ բանաստեղծուհի, որուն թախծութեամբ լի քերթուածները տեղ գտած էին մեր դասագիրքերու մէջ: Անոր գրական վաստակը ամփոփուած կը յաւերժանայ՝ 1909ին Պոլսոյ եւ 1956ին Երեւանի մէջ լոյս տեսած ժողովածուներու դալկահար էջերու մէջ: Երիտասարդուհի Արշակեանը օրացոյցի վրայ յիշուած է յուզիչ քերթուածով մը.*

Չեմ կրնար գանգատիլ
Ո՜հ, հառաչ մը մինակ
Դուրս հանել ծաղկատի
Չոր կուրծքէս աւերակ:
...
Օր մ՛ալ կը կորսուիմ,

## Յունիս - Մալվինէ Վալիտէեան (ա.տ, ա.թ)

*Կենսագրական տուեալները կը բացակային Մալվինէ Վալիտէեանի: Ան ընթերցողին ծանօթ է քնարական բանաստեղծութիւններու իր ժողովածուով՝ «Հոգիիս երգերը» (1935, Պոլիս): Օրացոյցի մէջ բանաստեղծուհին կը ներկայանայ հետեւեալ խօսքով.*

Եթէ երբեք չես լացած,
Եթէ երգդ արցունքներով,
Գալարումով չես շինած,
Բանաստեղծ, լռէ՛:

## Յուլիս - Նեւրիկ Սեպուհեան (ա.տ, ա.թ.)

*«Ամուսնական յարկին երջանկութիւնը» գործի հեղինակ Նեվրիկ Սեպուհեանը օրացոյցի մէջ հանդէս կու գայ զօրաւոր կնոջ իր պատկերացումով. «Խորհող կինը, այո՛, միմիայն զայն կը պաշտեմ ես, իմաստուն, Անահիտեան իր դիցական գեղին մէջ, վասնզի, իրաւա՛մբ, տարբեր գեղեցիկն է ան իր նմաններէն, եւ անոր ուժեղ ձայնը պիտի երթայ հնչել մինչեւ ապագան», 1937:*

## Օգոստոս - Ատրինէ Տատրեան (1913/1915, Չորում - 2002, Նիս)

*Սիպիլի աշակերտուհի, Վիեննայի եւ Պերլինի համալսարաններու ուսանողուհի, Պոլսոյ Արամեան-Ունճեան վարժարանի ուսուցչուհի Ատրինէ Տատրեանը «Պարտէզ» մանկապատանեկան հանդէսի հրատարակիչներէն մէկն էր: Ան հեղինակն է բազմաթիւ պատմուածքներու, քերթուածներու, հէքեաթներու, վէպերու, ինչպէս նաեւ՝ մանկական թատերախաղերու եւ դասագիրքերու: Ա. Տատրեանը օրացոյցի մէջ կարծես, թէ կը խօսի իր նկարագրի մասին. «Կը կարդամ, կը գրեմ... Կը սիրեմ առանձնութիւնը», Մայթերուն վրայ, 1955:*

## Սեպտեմբեր - Իրմա Աճէմեան (1936, Պոլիս - 1990, Փարիզ)

*Էսայեան Վարժարանի շրջանաւարտ, Պոլսոյ համալսարանի մանկավարժական եւ հոգեբանական ճիւղերու շրջանաւարտ, ապա օրուան թերթերուն, յատկապէս «Մարմարա» օրաթերթի աշխատակից, ուսուցչուհի, Գատըգիւղի Արամեան-Ունճեան վարժարանի տնօրէնուհի Իրմա Աճէմեանը օրացոյցի մէջ յիշուած է 1971ին գրի առած «Տալ Միայն» բանաստեղծութեամբ.*

Տալ տալ միայն, գրել, պատռել էջերը
***
Լերան ծոցէն ամպին իշխել, չընկրկիլ,
Լեցուիլ սիրով, նուիրումով

Շար.ը էջ 15

# Ամանորը «Փոքրիկ Հրեշտակներ» Շաբաթօրեայ Դպրոցում



*Օտար երկրում դպրոցը դառնում է փոքրիկ հայրենիք, հայապահպանութեան օճախ եւ այդ գիտակցութեամբ «Փոքրիկ Հրեշտակներ» շաբաթօրեայ դպրոցի անձնակազմը՝ գլխաւորութեամբ տնօրէն եւ բարեշնորհ Յովհաննէս սարկաւագ Գումրույեանի մեծ պատասխանատուութեամբ եւ նուիրուածութեամբ է վերաբերւում այդ սրբազան առաքելութեանը: Այսօր՝ այս դժուարին ժամանակաշրջանում, երբ մեր ազգի եւ պետութեան առջեւ օր օրի ծառանում են նոր մարտահրաւէրներ, առաւել քան երբեւէ կարեւորւում է ազգապահպանութեան, հաւատքի, հայեցի դաստիարակութեան դերը, ինչպէս հայրենիքում, այնպէս էլ՝ սփիւռքում, ինչն այս տարեշրջանին հպարտութեամբ եւ բարձր պատասխանատուութեամբ արեցին դպրոցի աշակերտները:*



*Ամանորը հեքիաթ է, որն իր հետ բերում է նոր յոյսեր, յոյզեր ու սպասումներ: 2023 թ.-ի Դեկտեմբերի 16-ին մարդաշատ էր ԱՄՆ Արեւմտեան Թեմի առաջնորդանիստ Ս. Ղեւոնդեանց մայր տաճարը, որովհետեւ Պրպենքի «Փոքրիկ Հրեշտակներ» շաբաթօրեայ դպրոցում տեղի էր ունենում հանդէս նուիրուած Ամանորին: Միջոցառումն սկսուեց արժանապատիւ տէր Խաժակ քահանայ Շահբազեանի «Տէրունական աղօթք»-ով:*

*Այն բաղկացած էր երկու մասից: Սկզբից մասնակցում էին առաջին եւ երկրորդ, ապա երրորդից մինչեւ վեցերորդ դասարանցիները: Աշակերտների թոթովախօս շուրթերից հնչեցին հայի ինքնութեան, յարատեւութեան, հայրենասիրութեան եւ հայրենիքին նուիրուած լինելու արդար մտորումներ ու համոզումներ: Երկրորդ դասարանի թեման էր Նոր տարին եւ Սուրբ Ծնունդը: Դպրոցականները մեծ ոգեւորութեամբ ներկայացրեցին մեր տիրոջ Յիսուս Քրիստոսի հրաշափառ ծնունդը: Երգեցին Ամանորեայ ուրախ երգեր եւ մեծ սպասումով դիմաւորեցին Ձմեռ պապիկին, որն, ի դէպ, այս անգամ եկել էր Հայաստանից՝ իր հետ բերելով հայրենիքի սէրն ու ջերմութիւնը, հասակակից մանուկների բարի մաղթանքներն ու կարօտը՝ հանդէպ իրենց սփիւռքահայ ընկերների:*

*Հանդիսութեան երկրորդ մասն սկսուեց երրորդից վեցերորդ դասարանի աշակերտների «Տէրունական աղօթք»-ի երգեցողութեամբ, որից անմիջապէս յետոյ հնչեցին ԱՄՆ-ի եւ ՀՀ-ի պետական օրհներգերը: Սաները հրաշալի կերպով ներկայացրեցին Երեւանի, Արցախի ու Հայաստան աշխարհի գոյներն ու բոյրերը՝ լցուած սիրով, նուիրումով ու անշէջ կարօտով: Յուզմունքն ու հպարտութիւնը միախառնուել էին իրար. որքա՜ն մեծ սէր ու հայրենասիրութիւն կար փոքրիկ հրեշտակների խօսքերի մէջ: Յուզուած ու տպաւորուած էին բոլորը, լցուած կարօտով, հպարտութեամբ ու սպասումով, որ հայը դեռ ասելիքներ ունի աշխարհին:*

*Անակնկալներն այսքանով չաւարտուեցին: «Փոքրիկ Հրեշտակներ» շաբաթօրեայ դպրոցն իր շնորհակալական խօսքն ուղղեց առաջնորդ, բարձրաշնորհ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանին՝ Արեւմտեան Թեմի առաջնորդութեան 20-ամեայ յոբելեանի առթիւ եւ յայտարարեց երգի պրեմիերա, այն նուիրելով Սրբազան հօրը: «Փոքրիկ Հրեշտակներ» շաբաթօրեայ դպրոցը յետայսու ունի իր օրհներգը, որը հեղինակել է հայրենիքում յայտնի երգչուհի եւ երգահան Մարինէ Մխիթարեանը, դպրոցի տնօրէն, բարեշնորհ Յովհաննէս սարկաւագ Գումրույեանի համահեղինակութեամբ:*

Հաւատքի ուժով,
Մայրենի լեզուով
Հայ ենք յաղթական՝
Հպարտ մեր ազգով:
Դարերից եկած,
Պատմութիւն կերտած,
Մաշտոցի շնչով
Աշակերտ դարձած:

«Փոքրիկ Հրեշտակներ»,
Քաղցրանուն դպրոց,
Ղեւոնդեանց ոգու
Ինքնութեան դարբնոց:
Տեսիլքով արդար,
Հոգով կենարար
Քո՛ զաւակն ենք մենք
Հայաստա՜ն աշխարհ:

Օտար ափերում
Չենք ձուլուի երբեք,
Կը պահենք յաւերժ
Ուխտը հայութեան:
Մեր Մասիս սարով,
Սուրբ Էջմիածնով,
Կրթօճախ դու՛ մեր
Շնորհակալ ենք քեզ:

«Փոքրիկ Հրեշտակներ»,
Քաղցրանուն դպրոց,
Ղեւոնդեանց ոգու
Ինքնութեան դարբնոց:
Տեսիլքով արդար,
Հոգով կենարար
Քո՛ զաւակն ենք մենք
Հայաստա՜ն աշխարհ:

*Վարժարանի համար պահը պատմական էր եւ յուզիչ: Յոտնկայս ունկնդրութեան ընթացքում ներկաներից իւրաքանչիւրը մտովի դարձաւ աշակերտ եւ իր հոգում ուխտ կատարեց հաւատարիմ մնալ հաւատքին, մայրենի լեզուին ու Հայաստան աշխարհին: Այս անգամ նոյնպէս հիւր եկաւ Ձմեռ պապը, շնորհակալութիւն յայտնեց հրաշալի կատարումների համար, նրանց հետ երգեց «Երեւանը մենք ենք» երգը, յանձնեց նուէրներն ու խոստացաւ ողջ տարին յիշել օտար ափերում ապրող, բայց հայ ու Հայաստանը իրենց սրտերում պահած «Փոքրիկ Հրեշտակներին»: Վերջում տնօրէնը, իր երախտիքի խօսքն ուղղեց Յովնան սրբազանին, տէր Խաժակին, դոկտոր Էլլի Անդրէասեանին, անցեալի եւ ներկայի բոլոր ուսուցիչներին՝ անձնուէր աշխատանքի համար, ինչպէս նաեւ ծնողներին ու աշակերտներին:*

*Գեղեցիկ օրն ամփոփեց բոլորի կողմից սիրելի, առաջնորդ Սրբազան հայրը՝ գերաշնորհ Տ. Յովնան արք. Տէրտէրեանը, որն իր օրհնութեամբ ու բարձր գնահատանքին արժանացրեց ներկաներին, մաղթելով, որ 2024 թ.-ը լինի խաղաղութեան, բարութեան տարի՝ լեցուն աստուածային սիրով ու հրաշքներով:*

*Գոհ ու հպարտ էին բոլորը, սէր ու ջերմութիւն կար ամէնուր: Պահը լի էր երազով, հաւատով, վաղուայ օրուան՝ գալիքի խաղաղ սպասումով ու նոր յաղթանակներ կերտելու հաստատակամութեամբ:*

**ԼԻԻԲԱ ԱՒԱԳԵԱՆ**
Ուսուցչուհի

**MEHER BABIAN, D.D.S.**
General Dentistry
Տոքթ. Մհեր Պապեան
Ատամնաբոյժ

1111 S. Glendale Ave., Suite 206
Glendale, CA 91205

Tel: (818) 547-0884
Fax: (818) 547-9360

**St. Gregory Armenian Apostolic Church Men's Forum**
(Ladies & Families Always Welcome)
Distinguished Speaker Series

**Thursday, January 18, 2024 – 6:30 P.M.**

**Special Guest Speaker: Perry Minasian**
**Los Angeles Angels General Manager**




**This will be an amazing evening hearing from a very Proud Armenian outlining his Armenian Heritage and where he started as a young batboy for the Texas Rangers to now the General Manager of the Los Angeles Angels and what transpired in between.**

**Perry's connection to the Armenian Church and Hye Camp and his strong feelings for his Armenian roots and his motivation to succeed.**

**Following The Presentation Will Be A Great Opportunity For Questions & Answers!!**

*At St. Gregory the Illuminator Church "Geragos Hall" 2215 E. Colorado Blvd., Pasadena*

***RSVP'S Are A Must As Dinner Will Be Served*** ***Church Donation $30***

*To pay online via credit card, venmo/paypal:* https://donorbox.org/st-gregory-men-s-forum

*Church Off. : 626-449-1523, Hilda Gourdikian: 626-695-9899, Ardash Gourdikian: 626-399-1914*

***Sponsor A Dinner in Memory of a Loved One, a Birthday, an Anniversary, in Recognition of a Friend or Family Member, a Graduation & for any Other Event. Please Contact Hilda Gourdikian above.***

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ



*ԱՐԱ ԱՐԹԻՆ ԳՕՓՈՒՇԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով յաւարտ Ս. Պատարագի տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն, կիրակի, 14 Յունուար, 2024ին, Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, 2215 East Colorado Blvd. Pasadena, CA 91107:*

*Խնդրողներ՝*

*Տիկ. Ռինա Ճռեան*

*Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Մատլէն Սաթամեան*

*Հանգուցեալին յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:*

******************

## MEMORIAL SERVICE

**ARA ARTIN KOPOOSHIAN**

A memorial service will be held following church service to mark the 40th day of ARA ARTIN KOPOOSHIAN's passing on Sunday, January 14, 2024, at St. Gregory Armenian Apostolic Church, located at 2215 East Colorado Blvd. Pasadena, CA 91107.

Requested by:

Mrs. Rina Jerian

Mr. and Mrs. Krikor and Madlen Satamian

## Յոբելեանական Երեկոյ

**Շարունակուած էջ 11-էն**

*Ձեր գործունէութիւնն ուսանելի է բոլորի համար: Տարիներ շարունակ Դուք եւ Ձեր գլխաւորած Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբն աշխարհի լաւագոյն բեմահարթակներում արժանապատւօրէն ներկայացնում էք հայ երգչախմբային արուեստը:*

*Հայաստանի ազգային հերոս, մեծ հայ,*

*Սիրելի մաեստրօ,*

*Ուրախ եմ, որ այսօր ողջ եռանդով շարունակում էք աշխատել: Վերստին շնորհաւորելով յոբելեանի առիթով՝ մաղթում եմ Ձեզ քաջառողջութիւն եւ ամենայն բարիք»:*

## Արեւմտահայ Գրագէտներ

**Շարունակուած էջ 13-էն**

սրբանալ

Տալ տալ երկար, գրել, պատռել էջերը

**Հոկտեմբեր - Վեհանոյշ Թէքէեան (1948, Պէյրութ)**

*Լիբանանահայ, այժմ Ամերիկաբնակ Վ. Թէքէեանը բանաստեղծ է եւ արձակագիր: Ան թղթակիցն էր «Գարուն», «Սովետական գրականութիւն», եւ սփիւռքի շարք մը պարբերականներու, աշխատակցած է Պէյրութի «Սփիւռք» եւ «Բագին» հանդէսներուն, հայկական վարժարաններու մէջ դասաւանդած է լեզու եւ գրականութիւն: Օրացոյցի մէջ ան ունի լակոնիկ ոճով արտայայտուած, ինքնատիպ եւ խոր միտք մը. «Շնորհակալ եմ որ գգուշացուցիր թէ հայրենիքը Սփիւռքահայ գրողի մը հոգիին լոյսով եւ մութով օծուն էջերուն հրուանդանն է»:*

**Նոյեմբեր - Մարուշ Երամեան (1955, Հալէպ)**

*«Ուրուագիծ Սփիւռքահայ Բանաստեղծութեան 1965-1995» գրական-ուսումնասիրական աշխատութեան, ինչպէս նաեւ թերթողական վեց գրքոյկներու եւ պատմուածքներու երկու հատորներու հեղինակ, «Բանաստեղծութիւն» պարբերագիրքի, «Մաշտոց» մատենաշարի խմբագիր Մարուշի բանաստեղծութիւնները նորաբոյր են եւ արդիական: Վահէ Օշականը ակնարկելով Մ. Երամեանի գրականութիւնը, ըսած է. «Թարմ հով մը կը փչէ Սուրիոյ աւազներուն վրայէն...»: Երամեանը օրացոյցի մէջ կը ներկայանայ որպէս արդիական բանաստեղծուհի.*

... Բառը լռեց.

Ինչ որ եղած է

կը շարունակէ շքեղութեան մը մէջ անտես

անգուշակելի

եւ կ՛ըլլանք-ի վերջոյ-մէկ միասին

բառին հետ

որուն էինք սկիզբէն

**Դեկտեմբեր - Թամար Մարի Պոյաճեան (1981, Մաունթըն Վիու)**

*Օրացոյցի վերջին էջի վրայ ներկայացուած է օրացոյցի խմբագիրներէն Թամար Մ. Պօյաճեանը: Ամերիկահայ այս արձակագիր եւ բանաստեղծի հետաքրքրութեան նիւթերն են հայկական ապագայապաշտութիւնը եւ արեւմտահայերէնի տեղը անոր մէջ, վտանգուած լեզուներ, թարգմանական հարցեր, ինչպէս նաեւ հայկական միջնադարեան գրականութիւնը: Դեկտեմբերի էջը ան պսակած է կանանց նուիրուած ինքնատիպ միտքով մը. «Եւ այսօր պիտի այս կիներուն մասին կարդայ: Որ գիրքերուն մէջ չեն գրուած: ... Եւ պիտի գրէ միշտ խորհելով որ ո՞վ է գրողը: Եւ պիտի գրէ խորհելով ու ինչո՞ւ կը գրէ»:*

*«Արեւմտահայ գրագէտներ» օրացոյցը իր իւրայատուկ միտքով, գեղագիտական ճաշակով, ինչպէս նաեւ 12 էջերը զարդարող դիմանկարներով թանկագին նուէր մըն է հայ կիներու եւ հայկական գրականութեան համար: Կասկած չունինք, թէ ան 2024ին պիտի զարդարէ հայկական բազմաթիւ տուներու, հաստատութիւններու ինչպէս նաեւ դասարաններու պատերը:*

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

*ՎԱՀԱՆ ԳԱՋԷՋԵԱՆԻ մահուան տխուր առթիւ հանգուցեալի դուստրը՝ Տէր եւ Տիկ. Շահան եւ Շուշիկ Գազէզեան-Օհաննէսեան շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք մասնակից եղան իրենց սուգին եւ ցաւակցութիւններ յայտնեցին՝ հեռաձայնելով, այցելութեամբ, ծաղկեպսակով կամ փոխան ծաղկեպսակի նուիրատուութեամբ:*

*Շնորհակալութիւն կը յայտնեն մասնաւորաբար Հ.Մ.Մ.ի վարչութեան եւ «Մասիս» շաբաթաթերթին:*

*Առ այդ $1000 կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ՎԱՀԱՆ ԳԱՋԷՋԵԱՆԻ մահուան առթիւ Հ.Մ.Մ.ի վարչութիւնը իր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան պարագաներուն:*

*Հանգուցեալներ՝ ՎԱՀԱՆ ԵՒ ԱՆԺԷԼ ԳԱՋԷՋԵԱՆՆԵՐ ստանձնած էին Հ.Մ.Մ.ի ANGEL ֆութպոլի երկրորդ խումբի նիւթական ծախսերը:*

*Հ.Մ.Մ.ի վարչութիւնը մասնաւորաբար շնորհակալութիւն կը յայտնէ անոնց դստեր՝ Շուշիկին եւ ամուսնոյն Շահան Օհաննէսեաններուն:*

*Առ այդ $200 կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:*

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

*ՎԱՀԱՆ ԳԱՋԷՋԵԱՆԻ մահուան տխուր առթիւ «Մասիս» շաբաթաթերթին եղած են հետեւեալ նուիրատուութիւնները՝*

*Տէր եւ Տիկ. Յարութ Աճէմեան $200*

*Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Սիւզան Պոյաճեան $100*

*Մի ոմն $100*

## Առաջին Սայեաթնովագէտը

**Շարունակուած էջ 12-էն**

Մանկական իմ սիրոյ երազը յիշեցրիր:

Յիշեցրիր ինձ քո թուխ աչքերի բարկ հրով

Լուսաշող ստուերներն այն տաքուկ գիշերով,

Մութն այգու, լուսնահար, դալուկ դէմքն այն գերի,-

Յիշեցրիր մրրիկներն առաջին կրքերի:

Յիշեցրիր անհամար ստուերներ սիրելի

Յանդերձիդ պարզութեամբ, սեւութեամբ տխրալի:

Գերեզման, արցունքներ, գիշերուայ մենութեան

Անդորրում յիշեցրիր ցնորքներ, զառանցանք:

Այն ամէնն, ինչ ընդմիշտ ժամանակը տարաւ,

Ինչ կեանքում ժպիտով ինձ եկաւ ընդառաջ,

Ինչ կորաւ եւ ինչին տենչացի տիրանալ,-

Յիշեցրիր: Եւ հիմա օգնիր ինձ մոռանալ:

*Մտերմութիւն հաստատելով ժամանակի ռուս բազմաթիւ գրողներու հետ, մասնաւորապէս Ալեքսանտր Պուշկինի եւ Միխայիլ Լերմոնտովի գրական աւազանէն են ներշնչուած Եաքով Փոլոնսքիի քնարական բանաստեղծութիւնները: Անձնական յոյզերու, հայրենի եզերքներու, համամարդկային սէրերու աստղաբոյլ մը կազմող իր քերթուածներն ու հայ-ռուսական գրական ամուր կապերով դրսեւորուած իր գրականութիւնը բոլոր ժամանակներու համար պիտի մնան սիրելի, փնտռուած, նոր հուր ու ոգեւորութիւն ներարկելով, նոր յոյս ներշնչելով գալիք սերունդներուն:*


# ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ

**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ**

**(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**

**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**

**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝**

**ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680**

## «Մանչըսթըր Սիթին»՝ Աշխարհի Ակումբային Ախոյեան



Անգլիոյ ախոյեան, գաւաթակիր, Ախոյեաններու լիկայի գաւաթակիր, Եւրոպայի սուփերգաւաթակիր «Մանչըսթըր Սիթին» առաջին անգամ ըլլալով նուաճեց աշխարհի ակումբային ախոյեանի տիտղոսը:

Սէուտեան Արաբիոյ Ճետտէ քաղաքին մէջ կատարուած եզրափակիչին «Մանչըսթըր Սիթին» 4:0 արդիւնքով պարտութեան մատնեց Լիպերթատորեսի գաւաթակիր, պրազիլական «Ֆլումինէնսին»:

Պրոնզէ Մետալները Նուաճածեց Եգիպտոսի «Ալ Ահլին»:

## «Լիվերփուլի» Եւ «Արսենալի» Խաղը Հաւասար Վերջացաւ

Անգլիոյի Փրեմիեր լիկայի առաջնութեան 18-րդ հանգրուանին առաջատար «Արսենալը» հիւրընկալեց «Լիվերփուլին»: Խաղը աւարտեցաւ 1:1 հաւասար արդիւնքով:

Չորրորդ վայրկեանին հանդիպման հաշիւը բացաւ «Արսենալի» պրազիլցի պաշտպան Գաբրիէլ Տէ Հուսիսը:

Հաւասարութիւնը վերականգնեց եգիպտացի յարձակող Մոհամետ Սալահը:

«Արսենալ» 40 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 1 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Լիվերփուլէն»: 39 կէտ ունի նաեւ երրորդ տեղը գտնուող «Աստոն Վիլան»:

## «Ուեսթ Հեմ» - «Մանչըսթըր Եունայթըտ»՝ 2:0

Անգլիոյ Փրեմիեր լիկայի առաջնութեան 18-րդ հանգրուանին Լոնտոնի «Ուեսթ Հեմը» իր դաշտին վրայ ընդունեց «Մանչըսթըր Եունայթըտին» ու յաղթանակի հասաւ 2:0 արդիւնքով:

«Ուեսթ Հեմը» 30 կէտով 6-րդն է, «Մանչըսթըր Եունայթըտը» 8-րդ տեղն է՝ 28 կէտով:

## «Ինթեր» Յաղթեց Եւ Կը Գլխաւորէ Մրցաշարային Աղիւսակը

Իտալիոյ առաջնութեան 17-րդ հանգրուանին Միլանի «Ինթերը» իր դաշտին վրայ մրցեցաւ «Լեչչէի« հետ եւ առաւելութեան հասաւ 2:0 արդիւնքով:

Աչքի ինկան գերմանացի պաշտպան Եան Պիսեկը եւ իտալացի կիսապաշտպան Նիկոլօ Պարելան:

Հայաստանի հաւաքականի նախկին աւագ, կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը «Ինթերի» հիմնական կազմին մէջ էր եւ փոխարինուեց 89-րդ վայրկեանին:

«Ինթեր» 44 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 4 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող Թուրինի «Եուվենթուսէն»:

## Լուիս Սուարես Միացաւ «Ինթեր Մայամիի» կազմին

Ուրուկուայի հաւաքականի 36-ամեայ յարձակող Լուիս Սուարեսը տեղափոխուեցաւ «Ինթեր Մայամի»՝ կնքելով մէկ տարուան պայմանագիր, կը հաղորդէ ամերիկեան ակումբի մամուլի ծառայութիւնը:

Լուիս Սուարես կը միանայ «Պարսելոնայի» իր նախկին խմբակիցներէն՝ Լիոնել Մեսիին, Ճորտի Ալպային եւ Սերխիօ Ղուսկեթսին:

## «Ինթերն» Ու Մխիթարեանը Հասան Համաձայնութեան

Միլանի «Ինթերը» ու Հայաստանի հաւաքականի նախկին աւագ, 34-ամեայ կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը հասն համաձայնութեան պայմանագրի երկարաձգման հարցով:

Մխիթարեանի նոր պայմանագիրը նախատեսուած կ'ըլլայ մինչեւ 2025թ. Յունիս:

Մխիթարեանը «Ինթեր» խումբէն սկսած է խաղալ 2022թ. Յուլիսէն: Ընթացիկ մրցաշրջանին ան մասնակցած է 23 հանդիպման, նշանակած է 2 կոլ, կատարած է 5 կոլային փոխանցում:

## Յայտնի են 2023 Թուականի Հայաստանի Տարուան 10 Լաւագոյն Մարզիկները



ՀՀ կրթութեան, Գիտութեան, Մշակոյթի եւ Սպորտի Նախարարութիւնը հրապարակեց Հայաստանի Հանրապետութեան 2023 Թուականի «Տարուան 10 լաւագոյն մարզիկներ» մրցոյթի արդիւնքները:

Նախարարութեան հաւատարմագրուած մարզական լրագրողներու եւ ՀՀ ազգային հաւաքականներու մարզիչներու բաց քուէարկութեան արդիւնքով ձեւաւորուած է տարուան տասը լաւագոյն մարզիկներու տասնեակը, որ ստացած է հետեւեալ տեսքը՝

Ալեքսանեան Արթուր/ յունահռոմէական ոճի ըմբշամարտի Եւրոպայի ախոյեան, աշխարհի առաջնութեան արծաթէ մետալակիր,

Ամոյեան Մալխաս/ յունահռոմէական ոճի ըմբշամարտի Եւրոպայի ախոյեան, աշխարհի առաջնութեան պրոնզէ մետալակիր,

Անդրէասեան Արման-2023 թ. ազատ ոճի ըմբշամարտի աշխարհի առաջնութեան պրոնզէ մետալակիր,

Բաչկով Յովհաննէս-2023 թ. բռնցքամարտի աշխարհի առաջնութեան պրոնզէ մետալակիր,

Դաւթեան Արթուր-2023 թ. սպորտային մարմնամարզութեան Եւրոպայի առաջնութեան ոսկէ եւ պրոնզէ մետալակիր,

Թեւանեան Վազգէն-2023 թ. ազատ ոճի ըմբշամարտի Եւրոպայի ախոյեան, աշխարհի առաջնութեան պրոնզէ մետալակիր,

Լալայեան Վարազդատ-2023 թ. ծանրամարտի Եւրոպայի եւ աշխարհի առաջնութիւններու արծաթէ մետալակիր,

Յարութիւնեան Արսէն-2023 թ. ազատ ոճի ըմբշամարտի Եւրոպայի ախոյեան, աշխարհի առաջնութեան պրոնզէ մետալակիր,

Մանասեան Նարեկ-2023 թ. բռնցքամարտի աշխարհի առաջնութեան պրոնզէ մետալակիր,

Սահակեան Գոռ-2023 թ. ծանրամարտի մեծահասակներու Եւրոպայի առաջնութեան ախոյեան, աշխարհի առաջնութեան պրոնզէ մետալակիր:

## Արմէն Մելիքբեկեանը Վերընտրուեցաւ ՀՖՖ Նախագահի Պաշտօնին



Արմէն Մելիքբեկեանը վերընտրուեցաւ Հայաստանի ֆութպոլի ֆետերացիայի նախագահի պաշտօնին (մինչեւ 2026թ.):

Մրցակիցը Հայաստանի հաւաքականի նախկին ֆութպոլիստ Արաս Օզբիլիզն էր:

Ընտրութեանը մասնակցեցաւ ՀՖՖ 25 անդամներէն 23-ը:

Արաս Օզբիլիսը ստացաւ 3 ձայն, Արմէն Մելիքբեկեանը՝ 20 ձայն:

Արմէն Մելիքբեկեանի թեկնածութիւնը առաջադրած էր «Անի» ակումբը, որու նախագահը Խորէն Յովհաննիսեանն է: Արաս Օզբիլիզի թեկնածութիւնը առաջադրած էր «Ուրարտու» ակումբը, որու նախագահը Ջեւան Չելոյեանցն է:

## 16-Ամեայ Ատելիա Պետրոսեանը՝ Մենասահքի Ռուսաստանի Ախոյեան



16-ամեայ Ատելիա Պետրոսեանը նուաճեց գեղասահքի Ռուսաստանի ախոյեանի տիտղոսը կանանց մենասահքին:

Չելիաբինսկի մէջ կատարուած առաջնութեան հայ մարզուհին երկու ծրագրի արդիւնքին՝ վաստակեցաւ 246,53 կէտ:

Կարճ ծրագրի առաջատար Կամիլա Վալիեւան ազատ ծրագրին սխալ թոյլ տուաւ եւ գրաւեց երրորդ տեղը (237,99):